ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԻԶ. ՏԱՐԻ ԹԻՒ 35 (1285) ՇԱԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 7, 2006
VOLUME 26, NO. 35 (1285) SATURDAY, OCTOBER 7, 2006

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

# ՖՐԱՆՍԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ ԺԱԳ ՇԻՐԱԳ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ ՅԱՅՏԱՐԱՐԵՑ՝ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼԷ ԱՌԱՋ ԹՈՒՐՔԻԱ ՊԷՏՔ Է ՃԱՆՉՆԱՅ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

*Ֆրանսայի նախագահ Ժագ Շիրագ կիրակի, Հոկտեմբեր 1-ին աւարտեց Հայաստան կատարած իր եռօրեայ այցելութիւնը, որու ընթացքին յայտարարեց, որ Թուրքիա պէտք է ճանչնայ Հայկական Ցեղասպանութիւնը՝ Եւրոպա մուտք գործելէ առաջ: Ան նաեւ կոչ ըրաւ Հայաստանին ու Ատրպէյճանին՝ «վերջին քայլը» առնելու Լեռնային Ղարաբաղի տագնապը լուծելու ուղղութեամբ:*

*Հոկտեմբեր 30-ի երեկոյեան ժամանելով Երեւանի օդակայանը Ֆրանսայի նախագահը դիմաւորուեցաւ Ռոբերդ Քոչարեանի կողմէ: Նոյն օրը ի պատիւ ֆրանսական պատուիրակութեան, որուն մաս կը կազմէր արտաքին գործոց նախարար Ֆիլիփ Տուսէ-Պլազի, կազմակերպուեցաւ ճաշկերոյթ:*

*Շաբաթ օրը առաւօտեան Ժագ Շիրագ ներկայ եղաւ Երեւանի Մեսրոպ Մաշտոց եւ Սայաթ Նովա պողոտաներու հատման հրապարակի վրայ տեղի ունեցած արարողութեան, որու ընթացքին հրապարակը կոչուեցաւ Ֆրանսայի անունով:*



Ֆրանսիայի նախագահը իր տիկնոջ հետ Ծիծեռնակաբերդ այցելութեան պահուն

*Պաշտօնական արարողութեան աւարտին Ֆրանսայի նախագահը մտաւ հաւաքուած ժողովուրդի մէջ, որոնցմէ շատեր բախտ ունեցան, սեղմելու նախագահ Շիրագի ձեռքը:*

*«Երբ Շիրագն ինձ ձեռք մեկնեց, այնպիսի անակնկալ էր, որ հազիւ կարողացայ սեղմել այն ու չհասցրի ինքնագիր խնդրել»,- պատմեց Աննա անունով աղջիկ մը:*

*Ֆրանսայի հրապարակի բացումէն ետք նախագահ Ժագ Շիրագ եւ Ռոբերդ Քոչարեան մօտ մէկ ժամ առանձնազրոյց ունեցան, որուն յաջորդեց մամլոյ ասուլիս հայ եւ*

*Շար.ը էջ 4*

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

## ՖՐԱՆՍԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՑԸ՝ «ՍՓԻՒՌՔԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՈՍԿԵԴԱՐԸ» ԱՆՈՒԱՆԵՑ ԹՈՒՐՔԻԱ

***ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ***

Իր նախընթացը չունեցող երեւոյթ էր Ֆրանսայի Նախագահ Ժագ Շիրագի գլխաւորած պետական մակարդակի պատուիրակութեան եռօրեայ այցը Երեւան, որ տեղի ունեցաւ Սեպտեմբերի 29 էն Հոկտեմբեր 1:

Յիշեցնենք, որ Ֆրանսայի նախագահի գլխաւորած պաշտօնական պատուիրակութեան մաս կը կազմէին Ֆրանսայի Ա.Գ. Նախարար Ֆիլիփ Դուստ-Բլազին, փոխադրութեան, զբօսաշրջութեան եւ ծովագնացութեան նախարար Դոմինիկ Պերբեն, պետական ծառայութեան նախարար Քրիստիան Ժագոբ, մշակոյթի եւ հաղորդակցութեան նախարար Ռենօ Դոնեդիօ Տէ Վաբրը, նաեւ՝ գործարարներ, գիտութեան, կրթութեան, մշակոյթի եւ մարզական ոլորտներու եւ հայ համայնքի ներկայացուցիչներ եւ անդամներ: Ուշագրաւ էր պատուիրակութեան ընկերակցող աւելի քան 45 լրագրողներու ներկայութիւնը, որ կուգար շեշտելու այս այցելութեան բազմանշանակ բովանդակութիւնը, որ անտես պիտի չանցնէր Թուրքիոյ կողմէ:

Դեռեւս 2001 թ. Փարիզ տրուած այցելութեան առիթով Հայաստանի նախագահութեան Շիրագին տուած հրաւէրին՝ Ֆրանսայի դիւանագիտութեան կողմէ բորբոքոլային մակարդակի պատասխանն էր եղած այս այցելութիւնը, որ պայմաններու բաղդորոշ բերումով կը զուգադիպէր Հայաստանի Անկախութեան Հռչակագրի 15-ամեակին:

Տարբեր ամբողջ կարմիր լաթը տեսած ցուլի մը նման, պաղարիւնը կորսնցուցած Թուրքիան սկսաւ մտահոգուիլ Ֆրանսական պատուիրակութեան Հայաստանի մէջ տալիք հաւանական այցելութիւններով, ունենալիք կարելի ելոյթներով, եւ վերցնելիք պետական յանձնառութիւններով:

Արդեօ՞ք Պատուիրակութիւնը պիտի այցելէր Ծիծեռնակաբերդ:

Շիրագ պիտի արտասանէ՞ր «Ցեղասպանութիւն» բառը:

Ան պիտի նախապայման ընդունէ՞ր «Ցեղասպանութեան ճանաչումը» Թուրքիոյ Եւրոմիութեան անդամակցութեան համար:

Ան պիտի անդրադառնա՞ր ընթացիկ ամսուան Հոկտեմբերի 12-ին «Ցեղասպանութեան ուրացման համար» Ֆրանսայի Խորհրդարանի կողմէ պատիժ սահմանող օրինագծի քուէարկութեան

*Շար.ը էջ 16*

## ՄԻՆՍԿԻ ԽՈՒՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ԴԱՐՁԵԱԼ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

*ԵԱՀԿի Մինսկի խումբի համանախագահները Հոկտեմբեր 3-ին Երեւանի մէջ յայտարարեցին, որ Հայաստանի եւ Ատրպէյճանի Արտաքին Գործոց նախարարներու միջեւ հանդիպումը պիտի կայանայ Մոսկուայի մէջ, Հոկտեմբերի 6-ին: Այս հանդիպումէն յետոյ բացառուած չէ, որ յայտարարուի երկու երկիրներու ղեկավարներու հանդիպման մասին:*

*Հայ լրագրողներու համար կայացած մամլոյ ասուլիսի ընթացքին Ամերիկացի համանախագահ Մէթիւ Պրայզա յայտնեց որ, իրենք այս պահին կտրուկ լուծումներ չեն ակնկալեր եւ չեն կարծեր, թէ բոլոր դժուարութիւնները հարթուած են, սակայն կը նկատեն կողմերու պատրաստակամութիւնը՝ խնդիրները խորութեամբ քննելու եւ առաջ շարժելու:*

*Ամերիկացի համանախագահի գնահատմամբ, միակ գործօնը, որ կը խոչընդոտէ գործընթացին, կողմերու միջեւ վստահութեան պակասն է:*

*Այս կապակցութեամբ Մէթիւ Պրայզա յայտնեց, որ հայկական լրատուամիջոցներէն մէկը հրապարակած էր, թէ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւ ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման հարցով պատրաստ չէ որեւէ փոխզիջման ընդհանրապէս, սակայն ատրպէյճանական լրատուամիջոցներէն մէկուն մէջ ըսուած էր, թէ Ալիեւ պատրաստ չէ որեւէ փոխզիջման, եթէ այդ չի բխիր Ատրպէյճանի շահերէն:*

*Մէթիւ Պրայզա ըսաւ, որ, իրեն համար յուսադրող է վերջին տարբերակը, եւ խորհուրդ տուաւ զգուշութիւն ցուցաբերել նման հրապարակումներու:*

*Ֆրանսացի համանախագահ Պեռնար Ֆասիէ, իր հերթին, հերքեց ատրպէյճանական լրատուամիջոցներու տարածած այն հաղորդագրութիւնը, թէ ինքը Պաքուի մէջ բացառած է Ղարաբաղի մասնակցութիւնը հակամարտութեան կարգաւորման գործընթացին:*

*Համանախագահները Երեւանի մէջ հանդիպած են Ռոբերդ Քոչարեանի եւ Վարդան Օսկանեանի հետ:*

*ԵԱՀԿ-ի Մինսկի խումբի համանախագահներուն ընկերակցող՝ ԵԱՀԿ-ի գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անճէյ Կասպրշիկ իր կարգի տեղեկացուց, թէ համաձայնութիւն գոյացած է Հայաստանի եւ Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարներու հանդիպման համար՝ քննարկելու հակամարտութեան գօտիէն ներս հրադադարի ամրապնդման հարցը:*

## 77 ԳՈՆԿՐԷՍԱԿԱՆՆԵՐ ԿԸ ՊԱՀԱՆՋԵՆ ՃԱՆՉՆԱԼ ՂԱՐԱԲԱՂԻ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ

*Միացեալ Նահանգներու մէջ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան ներկայացուցչութեան Ուաշինկթընի գրասենեակը, կը տեղեկացնէ որ, Ամերիկեան Գոնկրէսի խումբ մը անդամներ նամակով մը դիմած են նախագահ Ճորճ Պուշին՝ կոչ ընելով ճանչնալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան 15-ամեայ անկախութիւնը եւ ամրապնդել քաղաքական եւ տնտեսական յարաբերութիւնները Լեռնային Ղարաբաղի հետ:*

*«Ամերիկայի Միացեալ Նահանգները կրնայ եւ պէտք է ընդլայնէ յարաբերութիւնները օրինական եւ ժողովրդավարական տեսակէտով կայացած Լեռնային Ղարաբաղի հետ: Այդ կապերը պէտք չէ թելադրուած ըլլան արտաքին ուժերու կողմէ, այլ պէտք է ղեկավարուին երկու ազգերու ընդհանուր արժէքներով»,- ըսուած է Գոնկրէսէն ներս հայկական հարցերու համախմբումի ղեկավարներ՝ Ֆրանք Փալոնի եւ Ճօ Նոլընպըրկի նախաձեռնութեամբ պատրաստուած նամակին մէջ:*

*Նամակը ստորագրած են Ներկայացուցիչներու Տան 77 անդամներ եւ Սպիտակ Տուն յանձնուած է Սեպտեմբեր 29-ին:*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՈԴԵՌՆԻԶԱՑԻԱՅԻ «ՀԱՆԵԼՈՒԿԸ»

*Ֆրանսիայի նախագահի այցը Հայաստանի իշխանութիւնը փորձելու էր վերածել PR-ի, պարզ էր հենց սկզբից, երբ սկսեցին տեղեկութիւններ յայտնուել Ֆրանսիայի նախագահի հնարաւոր այցելութեան մասին: Ինչ որ առումով դա նաեւ տեղաւորւում է Հայաստանում ձեւաւորուած իշխանական աւանդոյթի համատեքստում, ըստ որի, երկրի իշխանութիւնը փորձում է հանրութեանն ի ցոյց դնել արտաքին աշխարհում, յատկապէս այդ աշխարհի հզօրների շրջապատում ունեցած բարեկամական կապը: Իշխանութիւնը դա ներկայացնում է թէ իբրեւ «դրսի աջակցութիւն» եւ թէ իբրեւ անձնական արժանիքի վկայութիւն: Տրամաբանական էր, որ աշխարհի հզօրագոյն երկրներից մէկի ղեկավարի այցը չէր կարող բացառութիւն լինել, եւ նոյնիսկ կարող էր բացառութիւն լինել առաւել չքեղութեան, հետեւաբար առաւել ճոխ PR փորձի իմաստով:*

*Սակայն քաղաքականութիւնը Ֆրանսիայի նախագահի այցի յամենայն դէպս հրապարակային մասում շատ քիչ տեղ գրաւեց: Առաւել մեծ չափաբաժին պատկանում էր մշակոյթին: Դա իհարկէ կարող է նշանակել, որ Հայաստանի եւ Ֆրանսիայի միջեւ առկայ քաղաքական որեւէ խնդիր չկայ, որն արժէ քննարկել: Ամէն ինչ շատ պարզ է ու ներդաշնակ, եւ Հայաստանի ու Ֆրանսիայի ղեկավարները կարող են միանգամայն հանգստութեամբ տրուել մշակոյթին, լսել Շառլ Ազնաւուրին: Բայց յատկանշական է համատեղ մամուլի ասուլիսի ընթացքում Ֆրանսիայի նախագահի արած մի յայտարարութիւնը, որի ընթացքում Ռոբերդ Քոչարեանի գոհունակ դէմքին մի պահ մտահոգութիւն յայտնուեց: Դա այն ժամանակ էր, երբ ներածական բարեկամական խօսքից յետոյ Ֆրանսիայի նախագահը նշեց նաեւ «այն խնդիրների քննարկման մասին, որ դեռ կան երկկողմ յարաբերութիւններում»:*

*Դա քաղաքականութեան մասին Ժագ Շիրագի արած միակ արտայայտութիւնն էր ասուլիսի ընթացքում, որն անգամ իր համառօտութեան պարագայում բաւական մտահոգեց Հայաստանի նախագահին: Իսկ դրանից հնարաւոր է ենթադրել, որ Շիրագի այցի քաղաքական բովանդակութիւնն իսկապէս, այցի ձեւաչափին համապատասխան, ունէր առանձնայատուկ բնոյթ: Դա թերեւս տեսանելի էր նոյնիսկ այցից առաջ, երբ «Հայաստանի Հանրապետութիւն» պաշտօնաթերթին տուած հարցազրոյցում Ֆրանսիայի նախագահը ասել էր, որ իր երկիրը Հայաստանին ցանկանում է օգնել քաղաքական մոդեռնիզացիայի հարցում: Սակայն Շիրագի այցի քաղաքական «առանձնայատկութեան» հաւանականութիւնը պարզ էր նոյնիսկ նրա այդ հարցազրոյցից շատ շաբաթներ առաջ: Lragir.am-ը ժամանակին գրել էր, որ Ֆրանսիայի նախագահը չի ցանկացել Հայաստան կատարելիք այցի շրջանակում այցելել Հայաստանի Ազգային ժողով: Դա աննախադէպ է՝ հաշուի առնելով, որ Ազգային Ժողով այցելութիւնը Հայաստանի պետական արարողակարգի մաս է: Մենք նշել էինք, որ Շիրագի մերձաւոր շրջապատին մօտ կանգնած աղբիւրները Ֆրանսիայի նախագահի այդ ցանկութիւնը պայմանաւորում էին Հայաստանի խորհրդարանում տեղի ունեցած «վերադասաւորումներով» եւ ղեկավար կազմի փոփոխութեամբ, ինչն այնքան էլ դրական արձագանք չէր գտել Ժագ Շիրագի մօտ: Եւ այցը փաստօրէն պարզեց, որ Ֆրանսիայի նախագահն իսկապէս չգնաց Ազգային Ժողով եւ կառավարութիւն:*

*Հնարաւոր է, որ Շիրագն այդ կէտը բաց է թողել ժամանակի սղութեան պատճառով: Բայց դա թերեւս հիմնաւոր պատճառ չէ խորհրդարան չկատարած այցելութեան բացատրութեան համար: Բանն այն է, որ Ֆրանսիայի նախագահի այցի հիմնական՝ երկրորդ օրը, նրա պաշտօնական հանդիպումները աւարտուել են ժամը 13-ին մօտ՝ Ռոբերդ Քոչարեանի հետ համատեղ մամուլի ասուլիսով, իսկ ծրագրային պաշտօնական յաջորդ կէտը արդէն միայն յաջորդ առաւօտ էր՝ այցելութիւն Մայր Աթոռ: Այսինքն Շիրագը ունէր բաւական ժամանակ մինչեւ Շառլ Ազնաւուրի համերգը «մի 15 րոպէով» խորհրդարան մտնելու համար, առաւել եւս, որ խորհրդարանը երկրի քաղաքական բարձրագոյն մարմինն է, յատկապէս Սահմանադրութեան փոփոխութիւնից յետոյ: Դա յատկապէս կարեւոր է, եթէ նորից նշենք այցի ձեւաչափի առանձնայատկութիւնը՝ քաղաքական բովանդակութեան կարեւորութիւն եւ այն, թէ ինչ էր ասել Շիրակը Հայաստանի քաղաքական մոդեռնիզացիայի առումով: Թերեւս ներկայիս խորհրդարանը, յատկապէս այնտեղ տեղի ունեցած վերադասաւորումներից յետոյ Ժագ Շիրագին մոդեռնիզացիայի յոյսեր չի ներշնչում:*

*Խնդիրն առաւել ակնառու է դառնում, երբ ուշադրութիւն ենք դարձնում մէկ այլ հանգամանքի: Ֆրանսիայի նախագահի մասնակցութեամբ որեւէ հրապարակային միջոցառման ներկայ չէին Հանրապետական եռեակի անդամները՝ Անդրանիկ Մարգարեան, Տիգրան Թորոսեան, Սերժ Սարգսեան: Մինչդեռ խօսքը վերաբերում է երկրի վարչապետին, Ազգային Ժողովի նախագահին եւ Անվտանգութեան խորհրդի քարտուղարին: Ընդ որում, եթէ յայտնի չէ, թէ ինչ էին անում առաջին երկուսը, ապա Սերժ Սարգսեանը Շիրագի այցի ժամերին կատարում էր ոչ թէ իր պետական, այլ հասարակական պարտականութիւնը՝ շախմատային ինչ որ միջոցառում էր բացում Կասկադի «լանջերին»:*

*Այդ ամէնը հիմք է տալիս ենթադրել, որ կարծես թէ գործ ունենք Ժագ Շիրագի դէմ կատարուած Հանրապետական դեմարշի, իսկ եթէ հաշուի առնենք, որ կուսակցականից առաջ, վերոնշեալ եռեակը պետական գործիչներ են, ապա դեմարշը վերածւում է «միջպետական» մակարդակի: Այդ պարագայում առաւել հետաքրքրական է դառնում «դեռեւս առկայ երկկողմ խնդիրների մասին» Ֆրանսիայի նախագահի ձեւակերպումը: Սակայն հաշուի առնելով այդ ամէնը, հնարաւոր է եզրակացնել, որ Մարգարեան-Թորոսեան-Սարգսեան «բողոքի ակցիան» հենց պայմանաւորուած է Ֆրանսիայի նախագահի վերաբերմունքով, որ նա արտայայտեց՝ չգնալով խորհրդարան եւ կառավարութիւն:*

*Մարգարեան-Թորոսեան-Սարգսեան եռեակին Շիրագից «հեռու» պահելով՝ Ռոբերդ Քոչարեանը ցոյց է տալիս, որ ինքն է այս երկրում իշխանութեան միակ տէրը եւ որեւէ հարց պէտք է իր հետ լուծել, իսկ հանրութեանն էլ ցոյց է տալիս, որ Արեւմուտքը միայն իր հետ է հարցերը լուծում եւ ուրիշ ոչ մէկի:*

***ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ***
***«ԼՐԱԳԻՐ»***

# ԱՆՄԵՂՍՈՒՆԱԿՈՒԹԵԱՆ ՇՔԱՀԱՆԴԷՍ

*Վերջին տասնհինգ տարիների ընթացքում Հայաստանը երբեք այսքան թոյլ չի եղել: Հայաստանում այսօր բացարձակ անիշխանութիւն է՝ բառիս բուն իմաստով: Ժողովրդի լեզուով ասած՝ «շունը տիրոջը չի ճանաչում»:*

*Ղարաբաղեան խնդիրը սահուն քայլերով տեղափոխւում է ՄԱԿ, ու յայտնի չէ, թէ ինչով կ՚աւարտուի դա, իսկ Վարդան Օսկանեանը ոչ միայն չի կարողանում երկու յօդաբաշխ նախադասութիւն կառուցել այդ մասին, այլեւ կարծում է, թէ իր առաքելութիւնը «Հայլուրի» մեկնաբանի բառապաշարով Ատրպէյճանի արտաքին քաղաքականութիւնը «լուսաբանելն» է: Անվտանգութեան խորհրդի քարտուղար Սերժ Սարգսեանը նոյնպէս դրանով զբաղուելու ժամանակ չունի. շախմատիստներին յետեւը գցած՝ մայմուն պար ածողի խանդավառութեամբ շրջում է երկրէ-երկիր ու հիւրասիրութիւններ կազմակերպում: Նպատակն, իհարկէ, սեփական «շուստրիութիւնը» գովազդելն է:*

*Կառավարութիւնն ընդհանրապէս խայտառակ վիճակում է: Արդէն երեք տարի է՝ երկիր են կառավարում ու նոր միայն սկսել են վիճել՝ իրենք ՀՀՇ-ի՞ քաղաքականութիւնն են շարունակում, 1919 թուականի դաշնակների՞, թէ՞ Ստոլիպինի: Պատկերացնում էք, չէ՞, ինքնաթիռն օդ է բարձրանում, արդէն երեք ժամ թռչում է, ու յանկարծ օդաչուները սկսում են իրար հետ վիճել՝ իրենք դէպի Փարի՞զ են թռչում, թէ՞ դէպի Բասարգեչար: Նոյն վիճակն է նաեւ խորհրդարանում: Այստեղ նոյնիսկ չեն կարողանում հասկանալ՝ կառավարութեան ներկայացրած օրէնքի տապալումը յաղթանա՞կ է, թէ՞ պարտութիւն: Նայում են իրար երեսի, գլուխները քորում ու իջնում բուֆետ: Բա ուրիշ ի՞նչ անեն, օրգանիզմի բոլոր ֆունկցիաներից միայն դա է անխափան աշխատում:*

*Այս համընդհանուր փնթիութիւնն ուղղակի սարսափեցնող է: Իշխանամէտ մտաւորականների նամակ կազմակերպելն ի՞նչ է, դա էլ չեն կարողանում կարգին անել: Ջեն էլ փայլում, որ կարելի էր գոնէ ստորագրութիւններ յօրինելուց առաջ ստորագրութիւնների հեղինակներին մի կէս բերան զգուշացնել, որ յետոյ անյարմար բան չստացուի:*

*Հայաստանն այսօր յիշեցնում է դժուար դաստիարակուող երեխաների յատուկ դպրոցի դասարան, որի ուսուցիչը մի քանի րոպէով դուրս է եկել: Ով ինչ գիտի՝ անում է: Մէկը գրասեղաններն է շուռ տալիս, միւսը թռնում է դիմացինի շալակը, երրորդն աղջիկների մազերն է քաշքշում, չորրորդը, աւելի հետաքրքիր զբաղմունք չգտնելով, առանց պատճառի հայհոյում է եւ թքում յատակին եւ այլն: Ջէ, իսկապէս, ուշադիր նայէք ձեր շուրջը: Գլխաւոր դատախազը, բանուգործ թողած, վաղալազկան հագին տրտինգ է տալիս տարբեր աշխարհագրական օբյեկտների շուրջ կամ լաւագոյն դէպքում հասարակական կազմակերպութիւններ յօրինում, քաղաքապետը կանաչ տարածքները լափելուց ազատ ժամերին յայտարարութիւններ է անում, թէ էլիտար շէնքերը նախատեսուած են բնակչութեան լայն խաւերի համար, պաշտպանութեան նախարարը Մոսկուայի ռեստորաններում ռուլետկաներ է նուէր ստանում, Քոչարեանը մեդալներ է յօրինում ու բաժանում «մոտիկներին», կենտրոնական բանկի նախագահը Սեդրակ Ռոբերտովիչի հետ գիր-ղուշ է խաղում դրամի օրուայ փոխարժէքի վրայ, քաղաքական կուսակցութիւնը գաղափարական նկատառումներով «տուկի թել» է բաժանում ազգաբնակչութեանը եւ այլն:*

*Այս ամէնը վկայում է միայն մի բանի մասին. Հայաստանում իշխանութիւն չկայ: Բոլորը հասկացել են, որ Քոչարեանը «նաղդ գնացող է» (իբր որ գնացող չէր՝ ի՞նչ էր անում), բայց չգիտեն, թէ յետոյ ինչ է լինելու: Այսինքն՝ դեռ պարզ չէ, տարիուկէս յետոյ Հայաստանում իշխանութիւն լինելո՞ւ է, թէ՞ Սերժիկ Ազատիչն է դառնալու նախագահ: Դեռ պարզ չէ՝ ղարաբաղեան խնդրում մեզ ստիպելո՞ւ են լուծումների գնալ, թէ՞ «պլստալու ենք»:*

*Ու քանի դեռ պարզ չէ՝ կարելի է լափել երկիրը, կրակել իրար վրայ, յիմար-յիմար ճառեր ասել միջազգային հանրութեան մասին, օրական երկու տոկոսով իջեցնել դոլարի փոխարժէքը, տրամւայի ռելսերը հալել, արմատուրա սարքել ու մոռանալ փոսերը լցնել, «ռազբիրատի» կանչել Ատրպէյճանի հոգեւոր առաջնորդին... Մի խօսքով՝ վայելել սեփական անմեղսունակութիւնը:*

***ԳՐԻԳՈՐ ՕՍԿԱՆԵԱՆ***
***«ՉՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»***

***ՄԱՍԻՍ*** ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՎԱԶԳԷՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ
Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**
Organ of **the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.

Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**
**1060 N. Allen Ave.**
**Pasadena, CA 91104**

## ԼՈՒՐԵՐ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻ ՇԱՐՔ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԻԱՒՈՐՈՒԵՑԻՆ ՀԱԿԱՔՐԷԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԷՋ

*ԵՐԵՒԱՆ, 28 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅԵԱՆ ՏԱՊԱՆ: «Հայ ժողովուրդը յայտնուել է պետականութեան կորստի վտանգի առջեւ: Երկրում տեղի է ունենում բոլոր ոլորտների, այդ թւում եւ քաղաքական դաշտի բացայայտ քրէականացում»: Այդ մասին նշւում է մի շարք ընդդիմադիր կուսակցութիւնների կողմից Սեպտեմբերի 28-ին ստորագրուած Հակաքրէական շարժման յայտարարագրի մէջ:*

*Ըստ յայտարարագրի, իշխանական բուրգում յայտնուած կրիմինալը ծաւալել է քրէածին ֆինանսական միջոցների կենտրոնացման լայնածաւալ գործընթաց: ՀՀ քաղաքացիները անպաշտպան են սեփական երկրում: Պարբերաբար կատարուող սպանութիւնների եւ ահաբեկչութիւնների զոհ են դառնում անմեղ մարդիկ. «Այս յանցաւոր գործողութիւնները Քոչարեան-Սարգսեան զոյգի բացայայտ թողտուութեան եւ ուղղակի խրախուսման հետեւանքն են»,- նշւում է յայտարարագրի մէջ:*

*Ըստ փաստաթղթի հեղինակների, ներկայիս իշխանութիւնների գերխնդիրը մէկն է՝ անել ամէն ինչ առաջիկայ ընտրութիւններում գործող ռեժիմը վերարտադրելու համար: Այդ նպատակով առաւել կոռումպացուած պետական պաշտօնեաներից եւ քրէական արմատներ ունեցող բիզնեսի պարագլուխներից Ռ. Քոչարեանի անմիջական հովանաւորութեամբ ստեղծուել է Սերժ Սարգսեանի խմբաւորումը, «որը Հայաստանի Հանրապետական կուսակցութեան քողի ներքոյ կաշառելով եւ շանտաժի ենթարկելով պետական ծառայողներին, ահաբեկելով հասարակութիւնը, ԶԼՄ-ներին ու քաղաքական գործիչներին պայմաններ է ստեղծում պետական յեղաշրջման համար»:*

*Ըստ յայտարարագրի, «Հայաստանի քաղաքացիների հիմնական մասը չի տրուել քրէականօլիգարխիկ տարրերին եւ իշխանութիւնը բռնազաւթածներին թոյլ չի տայ վտանգել հայ ազգի ապագան»: Փաստաթղթի հեղինակները համոզուած են, որ միայն համատեղ վճռական ջանքերով հնարաւոր է երկրի հասարակական եւ քաղաքական կեանքից դուրս մղել քրէական տարրերին:*

*Փաստաթուղթը ստորագրած կուսակցութիւնները յայտարարեցին, որ միաւորւում են հակաքրէական միասնական շարժման մէջ:*

*Յայտարարգիրը ստորագրել են 13 կուսակցութիւններ, այդ թւում «Հայրենիք եւ պատիւ», «Նոր ժամանակներ», «Ազգային միաբանութիւն», Հայաստանի ժողովրդական կուսակցութիւն, Սահմանադրական իրաւունք միութիւն, Հանրապետութիւն, Սոցիալ-դեմոկրատական Հնչակեան եւ այլ: Իրենց պատրաստակամութիւնը միանալ փաստաթղթին յայտնեցին նաեւ Դեմոկրատական եւ «Ժողովրդավարական Հայրենիք» կուսակցութիւնների ներկայացուցիչները:*

### ԳՆԵՐԸ ՉԵՆ ԻՋՆՈՒՄ, ՈՐՈՎՀԵՏԵՒ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ ՄՈՆՈՊՈԼԱՑՈՒԱԾ Է

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: Դոլարը Հայաստանում շարունակում է արժեզրկուել. տարադրամի փոխանակման կէտերում մէկ դոլարը վաճառւում էր 365 դրամով: «Դոլարը Հայաստանում արժեզրկուել է աւելի, քան աշխարհի որեւէ այլ երկրում»,- Ա1+-ին տուած հարցազրոյցում փաստեց ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախկին նախարար, այժմ հայ-ռուսական(Սլաւոնական) համալսարանի պրոռեկտոր, ֆինանսների եւ տնտեսութեան ամբիոնի վարիչ Էդուարդ Սանդոյեանը:*

*Ըստ նրա, մեր տնտեսութեան համար բաւականին բարդ խնդիր է կլանել հսկայական ծաւալի տրանսֆերտները, օգնութիւններն ու օտարերկրեայ ներդրումները: Նա իրավիճակը շատ վտանգաւոր է համարում, իսկ վիճակից դուրս գալու միակ ելքը՝ ֆինանսական սեկտորի զարգացումն է՝ բոլոր ինստիտուտներով հանդերձ:*

*Ինչո՞ւ դրամի արժէքաւորման պայմաններում չի նկատւում ներմուծման ապրանքների եւ գների անկում, չէ՞ որ տնտեսագիտական պարզ տրամաբանութեամբ, եթէ ներքին ազգային արժոյթը կայունանում եւ արժեւորւում է, ապա ներմուծումը առաւել շահութաբեր է դառնում, ընդ որում, զգալի անգամ, եւ ինչո՞ւ ներմուծման գները չեն իջնում: Այս հարցի պատասխանը, ըստ Էդուարդ Սանդոյեանի, շատ բարդ է ու շատ ուղղակի.*

*«Մի կողմից հասկանալի, միւս կողմից ցաւալի է. գները չեն նուազում, որովհետեւ մեր երկրի, ըստ էութեան, բոլոր ոլորտներում ձեւաւորուել է սեփականութեան խիստ կենտրոնացում՝ մոնոպոլիզացիա. մեր երկիրը ցաւօք շարունակում է զարգանալ օլիգարխիկմոնոպոլ տնտեսութեան զարգացման մոդելով: Ցաւում եմ, բայց սա տեսանելի ապագայում մեզ կը բերի նեոֆեոդալական հասարակարգի կառուցմանը, որովհետեւ ֆեոդալական յարաբերութիւնները ժամանակակից մոդելի վերարտադրման եղանակով արդէն նկատւում են, բնականաբար, յաջորդ ածանցեալն է սեփականութեան կենտրոնացում, քաղաքական լծակների կենտրոնացում. մենք այս ամէնի ականատեսն ենք այսօր»:*

*Պարոն Սանդոյեանը նկատում է, որ արդէն ագրոսեկտորում՝ գիւղատնտեսութեան ոլորտում ենք տեսնում հողի սեփականութեան կենտրոնացում. «Սրանք սարսափելի վտանգաւոր երեւոյթներ են, որ կը վտանգեն եւ մեր սեփականութիւնը եւ մեր անկախութիւնը, ու շատ նեգատիւ երեւոյթների կը յանգեցնեն»: Էդուարդ Սանդոյեանը կանխատեսում է դոլարի արժեզրկումը կը շարունակուի դեռ երկար:*

### ՄՏԱՒՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՖՈՐՈՒՄԻ ԴԻՄՈՒՄԸ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ

*Տեւական ընդմիջումից յետոյ, Սեպտեմբերի 29-ին տեղի ունեցաւ մտաւորականների ֆորումի աւագանու հերթական՝ 10-րդ հաւաքը: Հաւաքը ընդունեց ՀՀ քաղաքացիներին ուղղուած դիմում, որում ասւում է.*

*«Վերջին իրադարձութիւնները ամենայն ակներեւութեամբ մէկ անգամ եւս բացայայտեցին ոչ լեգիտիմ, յանցաւոր, կլանային ռեժիմի իսկական դէմքը: Ոճրամիտ գլուխը, որպէս մի չարորակ ուռուցք կաթուածահարել է հասարակական կեանքի բոլոր ոլորտները. քաղաքականութիւն, արդիւնաբերութիւն, գիտութիւն, կրթութիւն, առողջապահութիւն, գործադիր եւ դատական մարմիններ, տառացիօրէն ամէն ինչ:*

*Նոր կուսակցութիւնների ստեղծումը, եղածների վերադասաւորումը, ժողովրդավարութեան եւ երկրի հզօրացման եւ բարօրութեան մասին բարձրագոչ արտայայտութիւնները եւ կարգախօսները իրականում հետապնդում են մէկ նպատակ՝ ձեռքից բաց չթողնել իշխանութիւնը, պահպանել եւ բազմապատկել թալանածը, ապահովել անձնական անվտանգութիւնը:*

*Ներկայումս կլանային ռեժիմը նոր թափ է հաղորդում առաջիկայ 2007 եւ 2008 թուականների համապետական ընտրութիւններում իր գործունէութիւնը հերթական անգամ օրինականացնելու եւ եղած կարգավիճակը պահպանելու գործընթացին:*

*Նոյն նպատակն է հետապնդում ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման հարցում շուտափոյթ խաղաղութիւն կնքելու պատրուակի տակ քողարկուելը: Պատրուակ, որի պարտուողական ենթատեքստը ակնյայտ է՝ վերադարձնել ազատագրուած տարածքները, թոյլ տալ տարպէյճանցիներին մասնակցել հանրաքուէին եւ այլն:*

*Վտանգուած է հայ ժողովրդի եւ նրա պետականութեան ապագան: Սթափուել է պէտք: Ֆորումը կոչ է անում Հայաստանի բոլոր քաղաքացիներին, ում համար պատիւ ու արժանապատուութիւն հասկացութիւնները դատարկ խօսքեր չեն, ովքեր երկրի համար այս բախտորոշ պահին լրջօրէն մտահոգ են նրա ապագայով, գիտակցել անձնական պատասխանատուութեան կարեւորութիւնը, միաւորուել ու համատեղ ուժերով պատերազմ յայտարարել ոճրատոհմային ռեժիմին եւ յանցագործ դաւաճանների կողմից բռնազաւթած իշխանութիւնը վերադարձնել ժողովրդին»:*

### «ԳԱԼԻՔ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՐԴԱՐ ԵՒ ԱԶԱՏ ԵՆ ԱՆՑՆԵԼՈՒ»

*Ազգային ժողովում մեծամասնութիւն կազմող Հանրապետական խմբակցութիւնը հաւատում է, որ 2007 եւ 2008 թուականներին Հայաստանում կայանալիք ընտրութիւններն արդար եւ ազատ են լինելու: Այս մասին այսօր «Հայելի» ակումբում հրաւիրուած բանավէճի ժամանակ յայտարարեց խմբակցութեան անդամ Սամուէլ Նիկոյեանը ՝ նշելով, թէ «Հայաստանն այլընտրանք չունի եւ պէտք է ազատ ընտրութիւններ անցկացնի, հակառակ դէպքում՝ կեղծուած ընտրութիւնները կարող են սպառնալիք հանդիսանալ ազգային անվտանգութեանը»:*

*Նիկոյեանը վստահեցրեց, որ Հանրապետական կուսակցութիւնը ունի բոլոր ռեսուրսները, որպէսզի կարողանայ կազմակերպել մաքուր, արդար, թափանցիկ ընտրութիւններ:*

### ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹԵԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՎԻՃԱՀԱՐՈՅՑ ՕՐԻՆԱԳԻԾԸ ՉԸՆԴՈՒՆՈՒԵՑ

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Հոկտեմբեր 3-ին Հայաստանի խորհրդարանը չկարողացաւ հաստատել հեռուստատեսութեանը եւ ռադիոյին վերաբերող վիճահարոյց օրենսդրական փաթեթը:*

*Քուէարկութեան համար անհրաժեշտ էր առնուազն 66 պատգամաւորի մասնակցութիւն, մինչդեռ քուէարկութեանը մասնակցեց ընդամենը 47 խորհրդարանական, որից 46--ը քուէարկեց կողմ եւ 1--ը՝ դէմ:*

*Քուէարկութիւնը բոյկոտեցին ընդդիմադիր ուժերը՝ «Արդարութիւն» դաշինքը, «Ազգային Միաբանութիւն»--ը եւ «Օրինաց երկիր»--ը, ինչպէս նաեւ իշխանական կոալիցիայի մաս կազմող Դաշնակցութիւնը:*

*Օրինագիծը, որով, մասնաւորապէս, նախատեսւում է փոխել Հեռուստատեսութեան եւ ռադիոյի ազգային յանձնաժողովի կազմաւորման կարգը, բուռն վէճերի առարկայ էր դարձել խորհրդարանում:*

*Նախօրէին Հայաստանի 5 լրագրողական կազմակերպութիւններ կոչ էին արել պատգամաւորներին չընդունել օրէնսդրական փաթեթը առաջին ընթերցմամբ, պատճառաբանելով, որ յետագայում դժուար կը լինի դրանում էական փոփոխութիւններ կատարել:*

### ՕԵԿ-Ը ԿՈՉ Է ԱՆՈՒՄ ՀՆԱՐԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՏԱԼ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ՈՒԺԵՐԻՆ

*ԱՇՏԱՐԱԿ, 29 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅԵԱՆ ՏԱՊԱՆ: Աշտարակի քաղաքապետը մերժել է «Օրինաց երկիր» կուսակցութեանը տրամադրել դահլիճ տեղի բնակչութեան հետ հանդիպում կազմակերպելու նպատակով: Ինչպէս նշւում է «ՆՈՅԵԱՆ ՏԱՊԱՆ»-ին կուսակցութեան մամուլի ծառայութիւնից տրամադրուած հաղորդագրութիւնում, ՕԵԿ նախագահ Արթուր Բաղդասարեանի եւ ՕԵԿ պատգամաւորների՝ Աշտարակի ազգաբնակչութեան հետ հանդիպում կազմակերպելու նպատակով օրէնքով սահմանուած կարգով կուսակցութիւնը դիմել էր Աշտարակի քաղաքապետին՝ դահլիճ յատկացնելու խնդրանքով: Սակայն մէկ ժամ ժամանակ խնդրելուց յետոյ քաղաքապետը տեղեկացրել է, որ նոյնիսկ համապատասխան վճարի դէպքում դահլիճ տրամադրել չի կարող, քանի որ «Օրինաց երկիր»-ը ընդդիմութիւն է:*

*Դատապարտելով իշխանութիւնների «նման արատաւոր» քաղաքականութիւնը, կուսակցութիւնը կոչ է անում չոտնահարել Սահմանադրութեան եւ օրէնքների պահանջները եւ «հնարաւորութիւն տալ ՕԵԿ-ին ու ընդդիմադիր ուժերին՝ կազմակերպել հանդիպումներ ազգաբնակչութեան հետ»,- նշւում է հաղորդագրութիւնում:*

## ԼՈՒՐԵՐ

# ԻԼՀԱՄ ԱԼԻԵՒ. «ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿՆ ԱՇԽԱՏՈՒՄ Է ԱՏՐՊԷՅՃԱՆԻ ՕԳՏԻՆ»




Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Իլհամ Ալիեւը վստահութիւն է յայտնել, թէ «քաղաքական իրավիճակն աշխատում է Ատրպէյճանի օգտին»:

Ելոյթ ունենալով այսօր Ատրպէյճանի խորհրդարանի աշնանային նստաշրջանի բացմանը, Ալիեւն ասել է. - «Յետագայում էլ Ատրպէյճանի քաղաքականութիւնը պէտք է ակտիվ լինի: Մենք կ'անցնենք տեղեկատուական, տնտեսական գրոհի: Շարունակւում է ռազմական պոտենցիալի ուժեղացումը»:

Ինչպէս հաղորդում է ատրպէյճանական «Թրենդ» գործակալութիւնը, նա յայտարարել է, թէ «Ատրպէյճանի ռազմական բիւջէն պէտք է հաւասար լինի Հայաստանի ամբողջ բիւջէին», եւ վստահեցրել է. - «Միւս տարի մենք դրան կը հասնենք»:

Միաժամանակ, ըստ Ալիեւի, ռազմական պոտենցիալի ամրապնդումը չի նշանակում «հարցի աւտոմատ լուծում ռազմական ճանապարհով՝ դա վերջին միջոցն է»:

«Մեր քաղաքականութիւնը պէտք է ագրեսիվ լինի: Մենք պէտք է նախայարձակ լինենք: Երբ Ատրպէյճանը մի քանի անգամ ուժեղ կը լինի Հայաստանից, գուցէ առհասարակ հակամարտութեան ռազմական լուծման անհրաժեշտութիւն չլինի»,- կանխատեսել է Ալիեւը:

«Մենք մտադիր ենք շարունակել բանակցութիւնները ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի ձեւաչափի շրջանակներում», - յայտարարել է Ալիեւը: - «Սակայն գտնում ենք, որ միջազգային այլ կազմակերպութիւնների մասնակցութիւնը կարող է նպաստել այդ հարցի լուծմանը»:

«Մեր դիրքորոշումն անփոփոխ է մնում: Երկրի տարածքային ամբողջականութիւնը պէտք է վերականգնուի», - ասել է Ատրպէյճանի նախագահը եւ յաւելել. - «Դրա սահմաններից դուրս ես ոչ մի համաձայնութիւն չեմ տեսնում: Գրաւեալ տարածքները պէտք է ազատագրուեն, փախստականները պէտք է վերադառնան իրենց բնակավայրերը: Ղարաբաղի հայ բնակչութեանը կարող է ինքնավարութեան բարձր կարգավիճակ տրամադրուել»:

# ԺԱԳ ՇԻՐԱԳԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ



Վեհափառ Հայրապետը եւ Ֆրանսայի նախագահն ու առաջին տիկինը մոմ կը վառեն Էջմիածնի Մայր Տաճարէն ներս

Հոկտեմբերի 1-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայի Հանրապետութեան նախագահ Ժակ Շիրակին եւ իր գլխաւորած պատուիրակութեանը՝ ՀՀ արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանեանի, Ֆրանսիայում Հայաստանի դեսպան Էդուարդ Նալբանդեանի եւ Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Անրի Կիւնիի ուղեկցութեամբ:

Ողջունելով Ֆրանսիայի նախագահին հայոց հաւատի նուիրական հոգեւոր կենտրոն Սուրբ Էջմիածնում՝ Նորին Սրբութիւնն ուրախութիւն յայտնեց, որ Հայաստանի Հանրապետութեան 15-րդ տարեդարձը նշանաւորուեց հայ ժողովրդի բարեկամ երկրի նախագահի այցով, ինչպէս նաեւ Ֆրանսիայում Հայաստանի տարուայ միջոցառումներով:

Ամենայն Հայոց Հայրապետը շնորհակալութիւն է յայտնել Ֆրանսիայի իշխանութիւններին՝ Հայոց ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման համար, որը ոչ միայն արդարութեան վերականգնում էր հայ ժողովրդի հանդէպ, այլ ողջ մարդկութեան առջեւ: Ամենայն Հայոց Գարեգին Բ Հայրապետը նաեւ ծանուցեց պրն. նախագահին, որ առաջիկային որոշակի փոփոխութիւն է արձանագրուելու Ֆրանսիայի համայնքային կեանքում, որով Ֆրանսիայում հռչակուելու է մէկ թեմ, ինչին տասնեակ տարիներ ձգտում էր Հայոց Եկեղեցին եւ հայ համայնքը:

Իր հերթին, Ֆրանսիայի նախագահը, ուրախութիւն յայտնելով Հայ Եկեղեցու կենտրոն այցի առիթով, իր գգացուածութիւնը յայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի ջերմ ընդունելութեան համար՝ իր յարգանքը յայտնելով Հայ Եկեղեցուն եւ Հայոց Հովուապետին: «Շատ ուրախ ենք Ֆրանսիայում թեմ ստեղծելու Ձեր որոշման համար: Լաւ գիտէք, որ հայ ծագումով շատ ֆրանսիացիներ կան մեր երկրում պատմական տարբեր հանգամանքների բերումով»,- նշեց նախագահը: Ժագ Շիրագն անդրադարձաւ նաեւ երկու ժողովուրդների դարաւոր բարեկամութեանը, որը ձեւաւորուել է պատմութեան թէ՛ ուրախալի, թէ՛ ողբերգական պահերին: Մասնաւորապէս խօսելով Ցեղասպանութեան մասին՝ Ֆրանսիայի նախագահը ասաց. «Բնական էր, որ Ֆրանսիան առաջին երկրներից մէկը լինէր՝ ճանաչելու Հայոց ցեղասպանութիւնը օրէնքի միջոցով: ...Յոյս ունեմ, որ նման ոճիրները դատապարտելով՝ դրանք ապագային նորից չեն կրկնուի»:

Հանդիպմանն անդրադարձ եղաւ նաեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեանը: Նորին Սրբութիւնը կարեւորեց Ֆրանսիայի եւ նրա նախագահի դերը խնդրի խաղաղ կարգաւորման գործընթացում՝ նշելով, որ շարունակելու է ըստ ամենայնի ջանքեր գործադրել, որպէսզի բոլոր նմանօրինակ խնդիրները, եւ ի մասնաւորի Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը, խաղաղ լուծման առաջնորդուեն Տիրոջ զօրակցութեամբ եւ ողորմութեամբ: Իր հերթին, նախագահ Շիրագը հաստատեց, որ Ֆրանսիան փորձում է Մինսկի խմբի շրջանակներում իր աջակցութիւնը բերել խնդրի լուծմանը: «չպէտք է կամենալ, ցանկանալ եւ հաւատալ խաղաղութեանը»,- նշեց նախագահ Շիրագը:

Հանդիպման աւարտին Ֆրանսիայի նախագահը գրառում կատարեց Վեհարանի յուշամատեանում, ապա Վեհափառ Հայրապետն ու բարձրաստիճան հիւրն այցելեցին Մայր Տաճար, եղան Տաճարի թանգարանում:

# ԺԱԳ ՇԻՐԱԳ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Շարունակուած էջ 1-էն

ֆրանսացի լրագրողներու մասնակցութեամբ:

«Ինծի կը թուէր, թէ կը ճանչնամ Հայաստանը, բայց այսօր զգացի, որ՝ ոչ, առաջին անգամ կը տեսնեմ Հայաստանը եւ յուզուած եմ»,- ըսաւ Շիրագ, յիշելով հայ-ֆրանսական դարաւոր բարեկամութեան արմատները եւ այսօր երկու երկիրները կապող ընդհանուր հարստութիւնները: Ան «Մեծ ֆրանսիացի, Մեծ հայ, Մեծ արուեստագէտ» կոչեց Շարլ Ազնաւուրին եւ իր ուրախութիւնը յայտնեց, որ այդ օրը կրկին առիթ պիտի ունենայ լսելու անոր:

Ժագ Շիրագը տեղեկացուց, որ Ռոբերդ Քոչարեանի հետ առանձնազրոյցի ժամանակ խօսած են տարածաշրջանէն ներս խաղաղութիւնը կայուն դարձնելու մասին:



Ֆրանսայի նախագահ Շիրագ հաւաքուած ժողովուրդի մէջ

Ասուլիսի ընթացքին հայ-թրքական յարաբերութիւններու նիւթը բացին ֆրանսացի լրագրողները: Անոնք հետաքրքրուած էին Ցեղասպանութեան ճանաչումը ժխտելը մէկ տարի բանտարկութեամբ դատապարտելու մասին նոր օրինագիծը, որ յառաջիկայ օրերուն պիտի քննարկուի Ֆրանսայի խորհրդարանէն ներս: Այս մասին Շիրագ յայտնեց, որ իր երկիրը ճանչցած է Ցեղասպանութիւնը եւ անոր տուած է օրէնքի ուժ: «Իսկ օրէնքը Ֆրանսիայի մէջ պարտադիր է բոլորի համար»:

Ինչ կը վերաբերի Թուրքիոյ Եւրամիութեան անդամակցութեան պարագային եւ հայ-թրքական հարցերուն, Ֆրանսիայի նախագահը կարծիք յայտնեց, որ Եւրոպայի նման միութեան անդամակցելու պարագային որեւէ պետութիւն պէտք է ընդունի իր անցեալի սխալները, որոնք կը հակասեն տուեալ միութեան արժէքներուն:

«Ես անկեղծօրէն կը հաւատամ, որ ամէն մէկ երկիր մեծ կը դառնայ ընդունելով իր անցեալի խնդիրները: Արդեօ՞ք Գերմանիան, որ ինչպէս գիտէք ճանաչած է հրեաներու Ցեղասպանութիւնը, արդեօ՞ք կարելի է ըսել, թէ կորսնցուցած է իր մեծութիւնը եւ իր հանդէպ վստահութիւնը: Ընդհակառակը, երկիր մը միշտ կը մեծնայ ճանաչելով անցեալի սխալները: Եւ յատկապէս երբ նպատակ ունի մտնել ընկերութեան, միութեան մէջ, որ որոշ արժէքներ ունի, մարդու իրաւունքներու արժէքներ ունի: Եւ կը կարծեմ, որ Թուրքիան պէտք է լաւ մտածէ եւ ճանչնայ անցեալը, քննարկէ անցեալը», ըսաւ է Ժագ Շիրագ:

Ռոբերդ Քոչարեան իր կարգին ըսաւ, թէ Հայաստան դէմ չէ Եւրոպայի Միութեան մէջ Թուրքիոյ անդամակցութեան: Ան յայտնեց որ, կայուն եւ կանխատեսելի հարեւան ունենալը կը բխի Հայաստանի շահերէն:

Պետական այցի երկրորդ օրը Ֆրանսիայի նախագահը իր տիկնոջ հետ այցելեց նաեւ Ծիծեռնակաբերդի եղեռնի զոհերու յուշահամալիր եւ ծաղկեպսակ դրաւ Ցեղասպանութեան յուշարձանին եւ ծանօթացաւ Ցեղասպանութեան թանգարանին:

Շաբաթ երեկոյեան Ժագ Շիրագ եւ Քոչարեան Երեւանի Հանրապետութեան հրապարակին վրայ ներկայ գտնուեցան բացօթեայ համերգին, որու ընթացքին ելոյթ ունեցան Շարլ Ազնաւուր եւ ֆրանսացի այլ արուեստագէտներ:

ՄԱՍԻՍ

ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

## ԱԶԳԱՅԻՆ

# ՈՐՊԷՍԶԻ ՉԿՈՐՍՆՑՈՒՑԱԾ ՊԱՏՄԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ

*«...Ազատութիւնը երբեմն չի շնորհուիր: Ան կամ կը խլուի բաջութիւնով, կամ կը վաստակուի ջանք ու ճիգով: Շնորհած ազատութիւնը, ինչպէս եւ ժառանգութիւն ստացած դրամը, շատ գէշ կը գնահատուի եւ շատ շուտ կը կորսուի...»:*

**ՌԱՖԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ**

**ԱՀԱՐՈՆ ՇԽՐՏԸՄԵԱՆ**
**«ԱՐԱՐԱՏ»**

Պետականութիւն կառուցած ժողովուրդներու ամենէն նուիրական տօնն է անկախութիւնը: Անկախութիւնը յաւելեալ խորհուրդ կը ստանայ, մանաւանդ երբ ժողովուրդներ դարեր շարունակ պատմաքաղաքական պատճառներով զրկուած ըլլան անկախութեան եւ ազգային ինքնորոշման իրաւունքէն:

Այսպիսի դաժան ու մռայլ էջերով գրուած է հայ ժողովուրդին պատմութիւնը: Սակայն, շնորհիւ մեր ժողովուրդին քաղաքական տեսլականին, դարերու ընդմէջէն անկախութեան գաղափարը միշտ եղած է նուիրական իտէալ: Վեց դար շարունակ օսմանեան բռնատիրութեան տակ մնալէ ետք, անկախութեան տեսլականը արդիւնաւորուեցաւ Սարդարապատի հերոսամարտէն օրեր ետք, թէկուզ պարտադրութեան տակ, երբ 1918 Մայիս 28ին ափ մը հայրենի հողին վրայ յայտարարուեցաւ Հայաստանի անկախութիւնը:

Պատմութիւնը այլ ճակատագիր սահմանած էր հայ ժողովուրդին: Անկախութեան շնորհիւ ծնած Հայաստանի Հանրապետութիւնը ընդամէնը երկուքուկէս տարուան կարճ կեանք մը ունեցաւ: 1920 Նոյեմբեր 29ին Հայաստան խորհրդայնացաւ: Անկախակերտումի եւ ազատատենչութեան ոգին հարազատ մնաց հայ ժողովուրդի նկարագիրին: Հետեւաբար, 21 Սեպտեմբեր 1991ի վերանկախացումը միայն ժողովրդային հանրաքուէի արդիւնք չէր, այլ՝ անկախ եւ ժողովրդավար պետականութիւն կերտելու համազգային երազի մը իրականացումը:

Անկախութեան խորհուրդը եղած է մեր ժողովուրդին ազգային տենչն ու երազանքը: Անկախութեան նշումով, մենք կ՚ոգեկոչենք անոր ճանապարհին ինկած մեր բիւրաւոր նահատակներուն յիշատակը: Անկախութեան նշումը ինքնաճանաչման ու ազգային գիտակցութեան զարթօնքի կոչ է միաժամանակ: Անկախութիւն կը նուաճեն լիիրաւ գերիշխան ազգային օրրան կերտելու, ժամանակակից ժողովրդավար պետականութիւն կառուցելու, ժողովուրդին մշակութային ժառանգութիւնը ուռճացնելու եւ ազգային ինքնութիւնը ամրապնդելու, ինչպէս նաեւ իբրեւ ազգ ու հայրենիք հզօրանալու յանձնառութեամբ:

Անկախութեան պահպանման ի խնդիր Սփիւռքը իր բոլոր միաւորներով, անխտիր, լծուեցաւ հայրենակերտումի եւ վերանկախացած պետականութիւնը ամրապնդելու աշխատանքին: Դժբախտաբար, հայրենակերտումի եւ պետականութեան վերականգնման գործընթացին ու խանդավառութեան իրողութեան տակ, աստիճանաբար պարզուեցաւ, որ հայ ժողովուրդը դասեր քաղած չէր իր պատմութենէն:

Երբեւիցէ տրամադրութիւն չունինք, ոչ այսօր, ու ոչ ալ վաղը, հայրենաշինութիւն եւ պետականութիւն կերտելու զոհաբերութիւնները թերագնահատելու կամ մեղկօրէն քննադատելու: Անկախութեան գաղափարը եղած է ու կը մնայ մեր կուսակցութեան գոյակուիւին դատակնիքը: Անկախութեան նուաճումով մեր ու հայ ժողովուրդին արդար իրաւունքն էր տեսնել հայրենիքի շուրջ բոլորուած համայն ազգը ու հայուն հոգեւոր ու մտաւոր աշխարհը թռիչք առնէր, արտագաղթի փոխարէն հայրենի հողին վրայ հայ ընտանիքը բազմանար, խոյանքով սլանար հայրենի գիտութիւնը, մշակոյթը, կրթական մարզը, բայց... հակառակ անկախութեան 15ամեակին առիթով արտասանուած ոգեշունչ ճառերուն, կազմակերպուած շքերթներուն ու զօրահանդէսներուն, մետալներու տուչութեան ու պարգեւատրութեան, ժողովրդավարութիւնը նահանջ կ՚ապրի Հայաստանի մէջ: Քաղաքացիներու իրաւունքներն ու ազատութիւնները մշտապէս կ՚ոտնահարուին, պլուտոկրատիայի ամենազօրութիւնը եւ համատարած կոռուպցիան բարոյալքած է ժողովուրդը: Ցաւալի է, որ հայրենի մեր ժողովուրդը այս տօնը չ՚ընդունիր իբրեւ իր սեփականութիւնը, պարզ այն պատճառաւ, որ քաղաքացիներու իրաւունքներուն եւ ազատութիւններուն պաշտպանութեան գլխաւոր երաշխիքը՝ սահմանադրութիւնը, ժողովուրդին չի ծառայեր: Մէկ խօսքով՝ իշխանութիւնը ժողովուրդին չի պատկանիր:

Սահմանադրութիւնը կ՚արգիլէ որեւէ կազմակերպութեան եւ անհատի կողմէ իշխանութեան իւրացումը, զայն կը բնութագրէ իբրեւ յանցագործութիւն, իսկ Հայաստանի իշխանութիւնը կեղծ ընտրութիւններու եւ հանրաքուէներու միջոցաւ բռնագրաւուած է այսօր: Հետեւաբար, Հայաստանի անկախութիւնը եւ անկախութեան յառաջիկայ տարեդարձները միայն բառ կը մնան մինչեւ այն օրը, երբ ժողովուրդը ազատ ու արդար ընտրութիւններու միջոցաւ հաստատէ իր կորսնցուցած իշխանութիւնը: Հայրենի ժողովուրդը իշխանութեան գործող համակարգէն մեկուսացուցած է ինքզինք: Ցաւ ի սիրտ, ժողովրդավարութեան ալիքը լուրջ խարակներու կը բախի Հայաստանի մէջ: Քաղաքացիական իրաւունքներու անտեսումը գրեթէ սովորական երեւոյթ դարձած է: Իշխանութիւններ ամէնուրեք կ՚աշխատին օրինական իշխանութեան հաստատման հետամուտ լրատուական միջոցները լռեցնել: Ճնշելով հանրութիւնը՝ պետութիւնը ինքզինք կը զրկէ իր արմատներէն:

Մտահոգիչ չափանիշներու հասած է Հայաստանի գիտութեան ապագան: Իսկ ո՞վ մտահոգուած է գիտութեան ժառանգականութեամբ, երբ յաջորդաբար կը փակուին Հայաստանի գիտութեան խորհրդանիշ հաստատութիւններ: Իշխանութիւններուն համար այնքան ալ մտահոգութիւն չի պատճառեր հայ ժողովուրդի հպարտութեան առարկայ Բիւրականի աստղադիտարանին փակումը: Յաջորդաբար կը փակուին գիտական, ակադեմիական, թեթեւ ու ծանր արդիւնաբերութեան հաստատութիւններ: Գիտութեան մարզին անհրաժեշտ աջակցութիւն չի ցուցաբերուիր, մինչդեռ առանց մտաւոր անվտանգութեան երաշխաւորութեան ոչ միայն Հայաստանի տնտեսութիւնը խոցելի կը դառնայ, այլեւ՝ ազգային անվտանգութեան համայն համակարգը:

Բայց կայ նաեւ աւելի վտանգաւորը. Հայաստան ինքնուրոյն ու ամրակուռ տնտեսութիւն ապահովելու համար նախ պարտի յաղթահարել բարձր մակարդակներու վրայ հասած սուտերայնութեան մարտահրաւէրը: Առեւտուրի, շինարարութեան եւ ընդհանրապէս Հայաստանի տնտեսութեան մէջ ստուերայնութեան տոկոսը կը կազմէ 45-50 առ հարիւր: Քաղաքացիները թալանելու իբրեւ ազդու միջոց կը ծառայէ նաեւ իշխանութեան կողմէ հովանաւորուող դրամի արժեւորման քաղաքականութիւնը, որ միաժամանակ կը քայքայէ երկրին տնտեսութիւնը: Գիտենք եւ համոզուած ենք, որ Հայաստանի սահմանադրութիւնը պատրաստ է փտածութեան դէմ պայքարելու, բայց հարց կու տանք, եթէ իշխանութիւնները երբեւէ պատրաստ են...:

Անկախութենէն 15 տարի ետք ցաւով կ՚արձանագրենք, որ Հայաստանի քաղաքացիին անվտանգութիւնը երաշխաւորուած չէ տակաւին: Քաղաքացին դարձած է հպատակ, մտաւորականը՝ ստրուկ, իշխանաւորը՝ ամենատէր: Քաղաքական դաշտի քրէականացումը, քրէական տարրերու հետ գործակցաբար պետական պաշտօնեաներու սերտաճած բռնութիւնները, սպանութիւնները եւ անպատժելիութեան մթնոլորտը կրնան խախտել Հայաստանի անվտանգութեան հիմքերը, երկիրը կը մղեն քրէական յեղաշրջման սպառնալիքին տակ: Յանցագործութիւններու հեղինակներ անպատիժ կը մնան, այս պատճառաւ ալ բռնութիւններն ու ոճիրները կը շարունակուին: Սպանութիւններու հանդէպ հանդուրժողութեան առաջին պատասխանատուն երկրի բարձրագոյն ղեկավարութիւնն է, իր անընդունելի գործելակերպով: Սա ցաւ է, ազգային իսկական ցաւ: Հայրենիքը ամուր հիմքերու վրայ կառուցելու նախապայմաններէն է սահմանադրութեան լիարժէք գործադրութիւնը, իսկ պետականութիւնը ամրապնդելու գլխաւոր նախապայմանն է ժողովրդավարական համակարգի գոյառումը:

Հայաստանի անկախութեան 15րդ տարեդարձին առիթով պիտի չունենայինք այսօրինակ մտորումներ, եթէ երբեք գործող իշխանութիւնները մեղանչած չըլլային ժողովուրդին ու սահմանադրութեան դէմ: Անկախութեան 15 տարիներու ընթացքը կարելի է անվարան կոչել հայ ժողովուրդի կորսնցուցած պատմական ժամանակաշրջան:

Մինչ այդ, ժողովրդավար ու հզօր հայրենիք կերտելու գործընթացը պիտի շարունակուի:

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք**

**«Մասիս» Շաբաթաթերթին**

**INSURANCE COVERAGE CAN HELP YOU FINANCIALLY**

**I AM A PIECE OF PAPER BUT EVEN MORE**

1. I am an idea.
2. I accumulate money.
3. I am a promise for the future.
4. I can help educate your children.
5. I can guarantee the continuity of business.
6. I provide cash if death cut breadwinners income.
7. I am property that increases in value from year to year.
8. I lend money when you need it. With no questions asked.
9. I am tangible evidence that a man is a good husband and father.
10. I bring dignity, peace of mind, and security to the later years of life.
11. I am a declaration of financial independence, a charter of economic freedom.
12. I am the only thing that father can buy on the installment plan the mother does not have to finish paying for.
13. I am the financial guardian angel of the HOME.
14. **I am your insurance policy.**



**MARONIAN**

ABA

Blue Cross of California

Blue Shield of California

**A.B.A. INSURANCE SERVICES**

TEL: 818 **500-9585** – E-mail: BMaronian@aol.com
805 E. Broadway, Glendale, CA 91205 www.ABAinsuranceServices.com

## ԱԶԳԱՅԻՆ

# ԱՅՍ ԵՐԿԻՐԸ ՄԵՐՆ Է՝ ԻՆՉՊԻՍԻՆ ԷԼ ԼԻՆԻ


ARMENPRESS

**ԿԱՐԻՆԷ ԴԱՆԻԷԼԵԱՆ**

*15 տարին յոբելեանական տարեդարձ է եւ բաւական երկար ժամանակ, որպէսզի թէկուզ հպանցիկ կարողանանք արժեւորել այն, ինչ տուեց մեզ անկախութիւնը:*

*15 տարի արդէն մեր երազած անկախութեան տէրերն ենք, բայց իրա՞ւ մեր ակնկալած անկախութիւնն է: Ցանկացած իրավիճակի, ողբերգական թէ զուարճալի, մեր ժողովուրդը իրեն յատուկ հեգնոտ իմաստնութեամբ զարմանալի դիպուկ բնորոշումներ է տալիս՝ «մեզնից անկախ ապրում ենք», ասում է:*

*Շատ ժամանակ պէտք չեղաւ հասկանալու, որ «փշոտ է անկախութեան ճանապարհը», եւ «մեզ շատ փորձանք կը սպասէ»: Բայց ժամանակ պէտք եղաւ հասկանալու, որ անկախութիւնն առանց ժողովրդավարութեան ու օրինապահութեան նոյնն է, ինչ ճորտութիւնը:*

*Փորձանքները, որ բնական կը լինէին միայն անցումային ժամանակաընթացքում, երկար են շարունակւում: Այսօր էլ գործազրկութիւնը, արտագաղթն ու աղքատութիւնը քամում են երկիրը, սովորական քաղաքացուց խլում ամենակարեւորը՝ հաւատն իր գալիք ապագայի հանդէպ: Եւ անընդմէջ շարունակւում են փախուստի տրամադրութիւններ:*

*Կրթութեան, առողջապահութեան ոլորտներում տիրապետող կոռուպցիան, ոլորտներ, որոնց ուզած թէ չուզած առնչւում է միջին շերտից ցածր մակարդակում ապրող քաղաքացին (միջին շերտ մեզանում, այսպէս թէ այնպէս, դեռ չի ձեւաւորուել), սոցիալական, բնապահպանական ասպարէզներում հանրութեան իրաւունքների, վերջապէս սեփականատիրական իրաւունքների ոտնահարումները, վախն ու անվստահութիւնը դատական համակարգի հանդէպ, միայն լցնում են շարքային քաղաքացու հիասթափութեան բաժակը: Իւրաքանչիւր երկրի օրինաւորութեան ցուցիչը նաեւ ծերերի ու երեխաների հանդէպ նրա վերաբերմունքն է: Մեր երկրում հէնց ծերերի ներկան ու երեխաների ապագան է ամէնից անպաշտպան ու անորոշ: Յատկապէս ծերերի հանդէպ պետութեան օրէցօր նուազող մարդասիրութիւնը վարակել է նաեւ շարքային հային՝ խեղելով նրա աւանդական հոգեբանութիւնը եւ ընկալումները:*

*Յատկապէս գիւղական վայրերում տիրապետող թշուառութեան կողքին սուպերհարուստների ճոխ ու փարթամ կեանքն էլ աւելի անբարոյ ու անբնական է թւում: Մեր խեղճ ու կրակ, նորանկախ երկրում ինչ արագութեամբ եւ ինչ հունարով հաստատցան նրանց քսակները: Անկախութիւնը նրանք իւրովի հասկացան: Իրենց ձերբազատեցին խղճի ու բարոյականութեան բոլոր պարտադրանքներից՝ անխնայ կողոպտելով երկիրն ու իրենց հայրենակիցներին: Բոլոր ասպարէզներում կլանային գերիշխանութիւն, որ արգելում է օտար մէկի մուտքը, առանց հովանաւորի ու առանց փողի անպաշտպան հայաստանցի. մի՞թէ այդպիսին է մեր կամեցած անկախութիւնը:*

*Եւ սոցիալական ապահովութեան երաշխիքներ փնտռող քարաւանները կրկին քայլում են: Ընտանիք չկայ, որ դրսում մերձաւոր կամ հարազատ չունենայ: Հէնց նրանք, հեռւում դեգերողները, պահում են նաեւ այստեղի ընտանիքները՝ կտրատուած, կարօտից խեղուած:*

*Քանի դեռ կեղծւում են տեղական, խորհրդարանական, նախագահական ընտրութիւնները, քանի դեռ քաղաքական բոլոր, նաեւ ընդդիմադիր միջանցքներում ընդամէնը իշխանութեան «բազարներ» են գնում, ժողովրդավարութեամբ իմաստաւորուած անկախութիւնը տեսլական է մնալու:*

*Շարքային քաղաքացիին այս անկախութիւնը դեռ իր ցանկացած անկախութիւնը չէ: Իր երազած անկախութիւնը դեռ գալու է: Բայց ինքը գիտի՝ այս երկիրը իրենն է, ինչպիսին էլ լինի:*

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ
CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ
(ԿԼԷՆՏԷՅԼ, ՊԸՐՊԷՆՔ, ԼԱ ՔՐԷՍԷՆԹԱ)
ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

COMMUNITY FORUM
Հրապարակային Ասուլիս
Sponsored by:
THE ARMENIAN COUNCIL OF AMERICA
PANELISTS:
Bill Bogaard
Pasadena City Mayor:
Paul Little
Pasadena City Councilman:
Bernard Melekian
Pasadena Police Chief:
Dennis J. Downs
Pasadena Fire Chief:
Dr. Percy Clark, Jr.
Pasadena Unified School Superintendent:


Հրապարակային Ասուլիս Փասատինա Քաղաքի Ղեկավարութեան Հետ
COMMUNITY FORUM TO DISCUSS ISSUES OF CONCERN IN THE CITY OF PASADENA
Չորեքշաբթի, Հոկտեմբեր 25, 2006, 7:30 կ.ե.
Wednesday, October 25, 2006 , 7:30 pm
The Armenian Athletic Association "Homenmen" Center
1060 N. Allen Ave, Pasadena
It's about your taxes, your kids' schools, your safety and your daily commute …
It's about development, open space and sprawl…
It's about city resources and costs…
Refreshments will be served

# ՊՈՒՇԻՆ ԱՆՏԵՍԱԾ «ԴԱՍԵՐԸ»

**ՏՕՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆ**

*Նախագահ Ճորճ Պուշ եւ Անգլիոյ վարչապետ Թոնի Պլէր, իրենց հրապարակային ելոյթներուն մէջ այն վստահութիւնը կը յայտնեն թէ «Պատմութիւնը պիտի արդարացնէ իրենց առած քայլը Իրաքի պարագային»: Այլ խօսքով, իրաքեան պատերազմի երկու գլխաւոր պատասխանատուները, Պուշ եւ Պլէր, համոզուած են որ իրենց քայլը, Սատտամ Հիւսէյնը տապալելու եւ Իրաքէն ներս «ազատ եւ ժողովրդավարական դրութիւն մը, որ օրինակ պիտի ծառայէ Միջին Արեւելքի ժողովուրդներուն» արդարանալի է, մանաւանդ «Պատմութիւնը պիտի արդարացնէ» գայն:*

Իրանահայ առաջին հայ կին ֆիզիկոս Ալենուշ Տէրեանը տեղափոխուել է Թեհրանի ծերանոցներից մէկը: 82ամեայ աստղագէտ-ֆիզիկոս Դոկտ. Ալենուշ Տէրեանը աւարտել է Թեհրանի համալսարանը, ապա անցնելով Փարիզ, Սորպոնի համալսարանից ստացել է դոկտորայի աստիճան եւ տիտղոս: Նա անցեալ տարի Իրանի հեռուստածրագրի կողմից յայտարարուել է որպէս «Մնայուն արժէքաւոր դէմք», Իրանի ֆիզիքայի եւ աստղագիտական ասպարէզում: Դոկտ. Ալենուշ Տէրեանը շուրջ 50 տարիներ առաջ Թեհրանի համալսարանում սկսել է փորձարկումներ կատարել եւ հիմնադրել է առաջին աստղադիտարանը իր յարակից կարգ ու սարքերով: Ջունենալով որեւէ հարազատ, բարեկամ, հայ գիտնականը այսօր գտնուելով ծանր վիճակում, փոխադրուել է Թեհրանի «Թոհիդ» ծերանոցը: Մեր ազգային պարտքն է տէր կանգնել եւ հովանաւորել մեր ժողովրդի արժանաւոր զաւակներին:

***

Մշակոյթի եւ իսլամական յարաբերութիւնների կազմակերպութեան Կրօնների երկխօսութեանց քաղաքականութեան մշակման խորհուրդը, Նախագահութեամբ Պրն. Մոհամմատ Էրաղիի, իր 48րդ նիստի ընթացքում ուսումնասիրեց «Դաւինչիի Ծածկագիր» գիրքն ու դրա հիման վրայ պատրաստուած ֆիլմը եւ նկատի ունենալով որ այդ ստեղծագործութեան բովանդակութիւնը աղաւաղում է պատմական ճշմարտութիւններն ու խեղաթիւրում քրիստոնէութեան պատմական իրողութիւնները, արժէքներն ու ուսուցումները՝ դա դատապարտեց խստօրէն:

Այս խորհուրդը իսլամական մշակոյթի եւ առաջնորդութեան նախարարութեան ուղղած մի նամակով նրանից պահանջել է անհրաժեշտ քայլերի դիմել՝ կանխելու համար քրիստոնեայ քոյրերի եւ եղբայրների կրօնական զգացումները վիրաւորած այս գրքի հրատարակութիւնն ու հրապարակումը, ինչպէս նաեւ արգելել յիշեալ ֆիլմի էկրանաւորումը՝ Իրանի կինոթատրոններում:

***

Սպահան Նահանգի «Հոգէ Հոնարի» գեղարուեստից կեդրոնի ֆիլմարուեստի միաւորից ֆիլմարուեստի գործիչ Ջաւէն Ղուկասեանը տեղեկացրել է, որ Թուականիս Օգոստոս 1ին վերոնշեալ կեդրոնի «Սուրէ» դահլիճում ցուցադրուել է Հայաստանի Հանրապետութիւնում արտադրուած կարճամետրաժ ֆիլմերի շարան՝ բաղկացած «Ջմեռային Մեղեդի», «Նուռն», «Մի յղի կնոջ օրագիրը», «Ես ապրում եմ ողջերի հետ» ֆիլմերից:

Սոյն ֆիլմերը պատրաստուել են տարբեր փորձառութիւնների հիման վրայ, որոնք առաջացել են Հայաստանի ֆիլմարուեստի բնագաւառում՝ վերջին 15 տարիներում եւ դրանցում արտացոլուած է տարբեր դիտանկիւններից դիտուած ժողովրդի կենցաղը՝ Խորհրդային Միութեան փլուզումից յետոյ:

***

Իսլամական խորհրդարանի Տնտեսութեան յանձնաժողովը իր Յուլիս 23ի նիստում ընտրեց 17 հոգինոց մի պատուիրակութիւն՝

Շար.ը էջ 18

Հ.Մ.Մ. 1921

85 Ամեակ

ԺԱՄԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Նուիրուած՝
Հ.Մ.Մ.-ի Հիմնադրութեան 85-րդ Տարեդարձին

Կազմակերպութեամբ՝
Հ.Մ.Մ.-ի Արեւմտեան Ամերիկայի Վարչութեան

Երեկոն կը խանդավառեն՝
Սիրուած Երգիչ՝ Յարութ Փամպուքճեան եւ D.J. Tronix (Սեւակ)

Շաբաթ 11 Նոյեմբեր 2006, երեկոյեան ժամը 8:00-ին
«Verdugo Hills Country Club» սրահին մէջ - 400 W. Glenoaks Blvd., Glendale

Տոմսերու Համար Դիմել՝
Տովիկին՝ (626) 429-8366 կամ Կարինէին՝ (626) 755-4773

Մուտքի Նուէր
Ներառեալ Խմիչք՝ $85

## ԳՐԱԿԱՆ

# «ՀԱՅԿԱՇԷՆ ՈՒԶՈՒՆԵԱՆ» ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԸ՝ ՍԱՐԳԻՍ ՎԱՀԱԳՆԻ «ԱՐՇԻԼ ԿՈՐՔԻ» ՎԷՊԻՆ

*«Հայկաշէն Ուզունեան» Գրական, Բանասիրական եւ Պատմագիտական մրցանակները, հիմնուած 1966ին, մէկ կամ երկու տարիներու պարբերականութեամբ, ընդհանրապէս կը շնորհուին սփիւռքահայ եւ հայրենի գրողներու եւ մտաւորականներու, պսակելով տարուայ անոնց լաւագոյն երկը գրականութեան, բանասիրութեան եւ պատմագիտութեան մարզերէն ներս: Հայաստանի անկախացումէն ետք, երբ կը վատթարանար հայրենի մտաւորականներուն եւ գրողներուն տնտեսական իրավիճակը, սոյն մրցանակները, Պարոն Հայկաշէնին իսկ փափաքով սկսան տրուիլ հայրենի գրողներուն եւ մտաւորականներուն, անոնց այդ նեղ պայմաններուն մէջ նեցուկ կանգնելու համար: Այս տարի, սակայն, ան մեծապէս գնահատելով Սարգիս Վահագնի «Արշիլ Կորքի» վէպը որոշեց բացառաբար գրական մրցանակը յատկացնել նաեւ սոյն վէպին: Դժբախտաբար ճակատագիրը Թոյլ չտուաւ որ ինք անձամբ կարողանայ յանձնել մրցանակը, կեանքէն իր անժամանակ մեկնումին պատճառով: Սակայն իր տիկինն ու արժանաւոր երեք դուստրերը որոշեցին շարունակել իր բարեհամբաւ աւանդը եւ կատարել իր փափաքը: 2004-2005 տարեշրջանին համար Գրական Մրցանակը, Սփիւռքի իր բաժինով, յատկացուեցաւ Սարգիս Վահագնի «Արշիլ Կորքի» վէպին:*

*Մրցանակին տուչութիւնը կատարուեցաւ Սեպտեմբեր 3ին, Արշակ Տիգրանեան վարժարանի Գարապեան սրահին մէջ, Հայկաշէն Ուզունեանի յիշատակին նուիրուած հաւաքոյթին, ի ներկայութեան Տիկին Մարի Ուզունեանին, անոր դուստրերուն, հարազատներուն եւ Թէքեանական բարեկամներուն եւ գրասէրներուն: Յուշահաւաքը կազմակերպուած էր Թէքէեան Մշակութային Միութեան Լոս Անճելոսի մասնաճիւղին կողմէ:*

*Մրցանակը յանձնեց Հայկաշէն Ուզունեանի դուստրը՝ Թալին Ուզունեանը:*

## ԱՐՄԵՆՈՒՀԻ ԲՈՅԱՄԵԱՆ
## ՄԵՐ ԲԱԽՏԻ ԱՐՔԱՆ

Անելով կեանքը ծանր ու թեթեւ
Կշռելով բարու եւ չարի չափը,
Մեծ ափսոսանքով կարծես հասկացայ
Որ ճակատագիրն է մեր բախտի արքան:

Ամէն ինչի հետ կարող ենք հաշտուել
Ամէն ինչից մենք կարող ենք անցնել,
Բայց ճակատագրից մեր վերուց գրուած
Երբեք մենք կեանքում չենք կարող փախչել:

Լաւ կամ անողոք սահմանից այն կողմ
Ոչ ոք չի կարող անցնել հենց այնպէս,
Եւ մեր ծննդեան օրից սկսած
Մենք պատկանում ենք կեանքին վերահաս:

Ու կեանքի ստեղծած մեծ խառնարանում
Անվերջ ընկնելով եւ թաւալուելով,
Փորձում ենք փախցնել մեր ուրախութեան
Կամ տառապանքի բաժինները մեծ:

Ու լռութեան մէջ խորհելով անվերջ
Հարց եմ տալիս ինձ, ջլատուած կարծես,
Եթէ այս է ողջ խորհուրդը դժխեմ
Ո՞րն է կեանքի իմաստն իսկապէս:

— — — — — — — — — — — — — — — — — —

## ՆԵՐՍԷՍ Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ
## ԾՈՎԸ ՍԵՒ...
**Մայիսի 3ի օդանաւի անկման 113 անմեղ զոհերին**

Օրն այդ եղաւ սեւ
Ու ծովն էլ իր սեւ,
Ճակատագիրը խաւար ու մթին
Մարդկանց անարեւ,
Սեւ ծովը զրկեց:

Ծովն ալեկոծ
Առաւ գիրկը սեւ,
Իր խորքը տարաւ՝
Ոնց փետուր, տերեւ.
Սեւսիրտ ծով դու, սեւ...

## ԹԷ ԻՆՉՊԷՍ ԷՐ ՆԱ...
**Հօրս մահուան 25 ամեակին**

Հայի պէս վեհանձն,
Հայի պէս յամառ,
Իր ամբողջ կեանքում
Միշտ մնաց հպարտ
Եւ հոգւով՝ անպարտ:
Նա չխոնարհուեց
Ոչ ոքի դիմաց.
Գլուխ չծռեց
Ոչ մի բռնութեան

Եւ ուժի առաջ:
Իսկ երբ որոշեց
Ծառայել յաւէտ Ամենակալին.
Հայոց տաճարում
Հեզ ու հնազանդ
Խոնարհուեց տիրոջ
Զօրութեան առաջ.
Խնկարկեց միայն
Նախախնամութեան...

ՔԱՋ ՆԱԶԱՐ ՌՈՒԴԻՈ ԵԹԵՐ ՇՕ
Ամէն Կիրակի երեկոյեան
ժամը 11:00-ից 1:00
Կլենտէյլի 26-րդ կայանից

# ՍՏԱՑՈՒԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

## «ՆԱԽԻՋԵՒԱՆԸ ԵՐԷԿ ԵՒ ԱՅՍՕՐ»
### ԱՐՄԷՆ ՏՕՆՈՅԵԱՆ




*Շնորհակալութեամբ ստացանք սփիւռքահայ ծանօթ արձակագիր Արմէն Տօնոյեանի համանուն գիրքը, որ կը բաղկանայ 107 էջերէ, պատկերազարդ լոյս տեսած Navasart հրատարակչութենէն, Կլէնտէյլ:*

*Պատմական բովանդակութեամբ ներկայ հրատարակութիւնը կը խօսի Հայապատկան Նախիջեւանի դարաւոր անցեալի, ճարտարապետական, մշակութային եւ քաղաքական երեւոյթներուն մասին: Գիրքը նաեւ կ'անդրադառնայ Նախիջեւանը Ատրպէյճանին յանձնելու դաւադրական աշխատանքներուն մասին, Խորհրդային շրջանին:*

## «ԿԱՐՕՏԻ ԵՐԳԵՐ»
### ԱՒԵՏԻՍ ՆԱԶԱՐԵԱՆ




*Շնորհակալութեամբ ստացանք մեր յօդուածագիրներէն՝ Աւետիս Նազարեանի «Կարօտի Երգեր» քերթուածներու գողտրիկ ժողովածուն:*

*Գիրքը կը բաղկանայ 101 էջերէ: Լոյս տեսած է Ա.Մ.Ն. Կլէնտէյլ 2006ին, I-Ben Printing տպարանէն:*

*Գրքին մէջ տեղ գտած բանաստեղծութիւնները ունին հայրենասիրական եւ կարօտով շաղախուած տողեր, որոնք նուիրուած են Հայաստանին, Արցախին եւ իր ծննդավայր Քա'ւա'լա' գիւղին:*

## ՄԱՆԿԱ-ՊԱՏԱՆԵԿԱՆ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ՝ «ՀԱՅԸ ԵՒ ԻՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ»




*Սիլվա Տէր Ստեփանեան վերջերս լոյս ընծայեց «Հայը իր Հայրենիքը» գիրք-երգարանը, որ կը պարունակէ 46 ինքնագիր ոտանաւորներ, իւրաքանչիւր ոտանաւորի վրայ յօրինուած երգեր եւ գունաւոր նկարներ:*

*Հայ մանուկներու եւ պատանիներու մօտ Հայերէն սորվելու հետաքրքրութիւնը խթանելու եւ երգով ու պարով հաճելի դարձնելու միջոցներէն մէկն է այս գիրք-երգարանը: Բազմաթիւ երգերու բառերը մենք սորված ենք երգերը յաճախակի կերպով ունկնդրելով: Այս նպատակին պիտի ծառայէ նաեւ յիշեալ գիրքը, ուր ութը տողնոց եւ շատ պարզ լեզուով գրուած ոտանաւորներով ու երգերով հայ մանուկին պիտի ծանօթացուի Հայաստանի աշխարհագրութիւնը:*

*Այս գիրք-երգարանը կրնայ գործածուիլ նաեւ որպէս ուղեցոյց: Իւրաքանչիւր ոտանաւոր-երգ կարելի է վերածել «Դէպի Հայաստան մէկ օրուան այցելութեան»՝ ստեղծելով միջավայրն ու խօսելով Հայաստանի հրաշալիքներուն մասին, չէ որ ըսուած է թէ Հայաստանը «բացօդեայ թանգարան մըն է»:*

*«Հայը եւ Իր Հայրենիքը» երգարանին մասին արտայայտուելով Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան հետեւեալը ըսած է. «Մեզի համար անխառն ուրախութիւն է տեսնել որ Սիլվա Տէր Ստեփանեանը կը շարունակէ իր նուիրեալ աշխատանքը՝ իր ձիրքերը, տաղանդն ու կարողութիւնները ի սպաս դնելով հայ մանուկի կրթութեան ու դաստիարակութեան սրբազան առաքելութեան: Իր այս վերջին հրատարակութիւնը, ուր կան 46 ինքնագիր ոտանաւորներ եւ անոնց վրայ յօրինուած երգերն ու համապատասխան գունաւոր նկարներ, հայ մանուկը պիտի մղեն հայերէն կարդալու, հայերէն խօսելու եւ հայերէն երգեր ունկնդրելու: «Հայը եւ Իր Հայրենիքը» գիրքը պիտի նպաստէ նաեւ Հայաստանի մասին գիտելիքներ փոխանցելու մատղաշ սերունդին՝ անոր մէջ արթնցնելով ազգային ոգին ու ինքնագիտակցութիւնը»:*

*«Հայը եւ Իր Հայրենիքը» գիրքի խմբագիրն է Նուպար Քիւփէլեան, երաժշտութիւնը յօրինողը՝ հայրենի ծանօթ երաժշտագէտ Վահէ Հայրապետեան, նկարիչը՝ տաղանդաւոր արուեստագէտ Նանա Մինասեան, ծրագիրը համակարգողը՝ հայրենի հասարակական գործիչ Մանուէլ Մանուկեան:*

*«Հայը եւ Իր Հայրենիքը» գիրքը կարելի է ունենալ դիմելով Արեւելեան Թեմի Առաջնորդարանի Ս. Վարդան Գրատունը, 630 Second Avenue, New York, NY 10016, Tel. (212) 686-0710, ex. 152:*

## ՅՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ

# ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՍԻՐՈՅ ՅՈՒՇԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՊԵՏՐՈՍ ՆԱՃԱՐԵԱՆ

*Մի տարիք կայ որ մարդը վերյիշում է պատանեկան, երիտասարդական լաւ կամ վատ օրերը, ինչպէս հարուստը երբ սնանկանում է, հին թղթերը սկսում է թերթել:*

*Աւելին ման ես գալիս դպրոցական կամ համալսարանական ընկերների նկարները: Այստեղից էլ մեր բարեկամի համար օգնութեան հասաւ ժողովրդային երգիչ Հայաստանի սոխակ Աւետիս Իսահակեանի խօսքերով Տիկին Գոհար Գասպարեանը: Մեր բարեկամը մեքենան վարելու ժամանակ արկածի հետեւանքով ընդհարւում է հեծանիւ քշողի հետ, անփութութեան հետեւանքով հեծանիւ քշողը հարուածում է մեքենային: Մեր Հայաստանի պետական տեսչութեանը այդ էր հարկաւոր եւ կազմում են արձանագրութիւն որպէսզի անպայման բանտ տանեն իմ բարեկամիս:*

*Մի օր հարեւաններով զրոյցի ժամանակ իմացանք որ Տիկ. Գոհարը նկարների հաւաքածոյ է հաւաքում իր անցեալի նկարները Գահիրէում ապրելու ժամանակաշրջանում:*

*Մեր տան մէջ ունէինք մի նկար որտեղ կինս պատանի հասակում, Տիկ. Գոհարի երգչախմբում նկարուած է միասին: Այդ նկարի օգնութեամբ մենք իրար հետ դարձեալ բարեկամացանք, եւ մեզ օգնութեան ձեռք մեկնեց Հայաստանի Գերագոյն Սովետի Դեպուտատ Տիկ. Գոհար Գասպարեանը եւ մեր բարեկամի դատական գործը կարճուեց եւ մեր բարեկամը ազատուեց բանտից:*

*Ես դատական գործ չունեմ փառք Աստուծոյ, սակայն տարիքս 80ին շուտով հասնելու է մտածեցի երիտասարդական յուշերս գրի առնել, որ կատարուեց Հայաստանում:*

*Յիշեցի 59 տարի առաջ կատարուած, իրական մի դէպքի մասին, թէ ինչպէս մի օր Երեւանում ծանօթացայ Ռիմա անունով մի շատ գեղեցիկ ռուս աղջկայ հետ:*

*Քսան տարեկան հասակում 1947 թուին ներգաղթեցի Երեւան, առաջին անգամ գնացի աշխատանքի Երեւան քաղաքում որպէս աւտօ վերանորոգող: 15 օր յետոյ ինձ ասեցին որ գնամ գրասենեակ աշխատավարձ ստանալու: Բացատրեցին թէ ինչպէս պիտի գնամ գրասենեակ, հասել էին Ստալինեան պողոտայի եւ Կարմիր բանակի փողոցի անկիւնը, հարցնում էի մի քանի մարդկանց: Այդ վայրկեանին տեսայ մեր կառաժի շինարար բանուորին, որին տեսել էի մի քանի անգամ, մօտեցայ նրան եւ իրար հետ գնացինք գրասենեակ: Ներս մտնելուն պէս աչքիս զարկաւ գրասեղանի մօտ նստած մի շատ գեղեցիկ ռուս աղջիկ, շատ սիրուն էր, ճիշտ նման էր Թել-Աւիւում իմ տեսած ռուսական ֆիլմի դերասաններից ցուցադրուած ռուս աղջկան: Սենեակի գլխաւոր տեղը զբաղեցնում էր գլխաւոր հաշուապահը, ճիշդ սենեակի մէջտեղը, կողքի աթոռը զբաղեցնում էր այդ ռուս աղջիկը, իսկ դրան մօտ էր գանձապահը, որի մօտ հաւաքուել էին 2-3 հոգի աշխատավարձ ստանալու: Հերթը երբ հասաւ ինձ, գանձապահ կինը պահանջեց անձնագիր, պատասխանեցի որ մօտս չէ, տանն եմ թողել:*

*- Գնացէք, երբ ձեր անձնագիրը բերէք, այն ժամանակ էլ ձեր դրամը կը ստանանք:*

*Շատ փորձեցի համոզել, անդամ կողքիս շինարար տղան, նոյնպէս, խնդրում էր եւ հաստատում ու վստահեցնում, որ ինձ ճանաչում է, այս բոլոր խնդրանքները մնացին անպատասխան: Տեսնելով, որ այլեւս անյոյս է, հրաժարուեցի դրամ ստանալուց, եւ ահա ուզում էի դուրս գալ, մէկ էլ տեսնեմ գլխաւոր հաշուապահ Օֆէլեան ինձ ասաց:*

*- Գիտես Պետրոս այս աղջիկը քեզ երաշխաւորում է որպէսզի դրամդ ստանաս եւ կարգադրեց գանձապահին որպէսզի վճարի իմ հասանելիք աշխատավարձը: Մինչ այդ ես տեսնում էի թէ ինչպէ՞ս էր բարեխօսում այդ գեղեցիկ ռուս աղջիկը իմ մասին: Բայց ես, այդ ընթացքում, քրտինքի մէջ կորել էի եւ չէի հասկանում ի՞նչ անել կամ ի՞նչ ասել, այնքան որ շնորհակալութիւն էի յայտնում բոլորին, բայց ոչ գանձապահին, գլխաւոր հաշուապահ Տիկ. Օֆելեան ինձ ասում էր որ դու միայն այս ռուս աղջկան շնորհակալ եղիր, նա քեզ համար երաշխաւորում է որ ստանաս քո դրամը եւ այսպէս դրամը դրեցի գրպանս եւ դուրս եկայ գրասենեակից, բայց խելքս միտքս այդ գեղեցիկ ռուս աղջիկն էր, հազիւ էին ոտքերս շարժւում: Մտքերի մէջ խորասուզուած այդ ռուս աղջկայ վրայ, սակայն ինչ կարող եմ անել, ոչ ռուսերէն գիտեմ ոչ էլ կարգին հայերէն, եւ այդ մտքերով տարուած մէկ էլ յանկարծ, թեւիս մի մարդ կպաւ, տեսնեմ գլխաւոր հաշուապահը Օֆելեան իր ամուսնու հետ եւ միւս կողմն էլ գրասենակի ռուս աղջիկը, որը երբեք աչքիս առաջից դուրս չէր գալիս, որի անունն անգամ չգիտէի:*

*Օֆէլեան մեզ ծանօթացրեց, աղջկայ անունը Ռինա էր, իսկ ամուսինը՝ Յակոբ: Ես էլ իմ հերթին ինձ ներկայացրի, - Պետրոս Պաղեստին Եաֆֆա քաղաքից: Յետոյ Օֆէլեան հարցրեց - Պետրոս ինչո՞ւ համար ես կանգնել այս տեղ: Տրամուայի եմ սպասում, պատասխանեցի:*

*-Ջե՞ս ուզում մեզ հետ կինօ գնալ:*

*- Խնդրեմ ասացի, սիրով կը գնամ եւ այսպէս չորսով գնում ենք նախկին Ստալինեան պողոտայով: Թարգմանիչի դերը կատարում էր Օֆելեան: Հասնելով Ամիրեան փողոցի անկիւնը, Օֆելեան թեւանցուկ անելով իր ամուսնուն, բարձրաձայն ասեց, ես ձեզ համար ինչքան պիտի թարգմանեմ դուք գնացէք ձեր գործին եւ մենք գնում ենք մեր գործին եւ այսպէս մեզանից բա ժանուեցին ամուսինները: Այդ ընթացքում ռուս աղջիկը թեւս մտաւ եւ ինձ քաշելով տարաւ եւ ինձ հետ ռուսերէն խօսելով քայլում էինք, կարծես հին բարեկամներ լինէինք, այդ խօսակցութեան մէջ միայն հասկացայ որ կինօ ենք գնալու, շատ ուրախացայ յիշեցնեմ որ խօսելու ժամանակ հայերէն ռուսերէն մի քիչ էլ անգլերէն եւ չմոռանամ ասելու որ համրերի նման ձեռքերով եւ մէկ մէկ էլ աչքերով ենք իրար հասկացնում մեր ուզած խօսքերը եւ այսպէս հասանք կինօ Մոսկուան, որտեղ առաջին անգամին էի լինում Երեւանում:*

*Մինչեւ կինոյի սկսելը հանգիստ իրար հետ խօսում էինք համրերի նման (լալավարի), մի քանի անգամ փորձեցի պաղպաղակ հիւրասիրել եւ կամ չոքոլադ, մերժեց (եւ այսպէս մինչեւ վերջ երբեք դրսից ոչ մի անգամ բան չէր ուտում): Մեր խօսակցութիւնը շարունակւում էր, հենց որ լոյսերը անջատուեցին եւ վարագոյրը բացուեց մեր խօսակցութիւնը ընդհատուեց քանի որ մեր ձեռքերը չէին երեւում եւ մեր աչքերը չէին խօսում եւ այսպէս խօսակցութեան գլխաւոր աղբիւրը կտրուեց: Մխրճուած մտքերի մէջ ես ինձ հետ էին խօսում, արդեօ՞ք այս բոլորը երազ է որ ինձ հետ էր կատարւում: Ես ինձ չէին հաւատում, նախ կողքիս աղջիկը ռուս է, երկրորդ ես ռուսերէն չեմ գիտեր, իսկ ամենակարեւորը որ ես հայ եմ, եկել եմ իմ հայրենիքը որպէս հայ մնալու եւ հայի հետ ընտանիք կազմելու, այս բոլորը վայրկեանական մտքիս մէջ ժապաւէնի նման անցնում էր:*

*Ցաւալին այն էր որ կինոն էլ ռուսերէն, տարբեր երկրներում թարգմանւում էր ֆիլմի խօսքերը սակայն հայրենիքում լինելով հանդերձ համրի նման մինչեւ վերջ նստեցի ռուս աղջկայ մօտ, թէ հոգեպէս եւ թէ ֆիզիքապէս տանջուեցի մինչեւ կինոյի աւարտը:*

*Կինոյի լոյսերը դարձեալ վառուեցին եւ դուրս եկանք կինոյից, ես ուզում էի ման գալ քաղաքը, ես ծանօթ չեմ Երեւանին, այդ կինոմոսկուայում էլ առաջին անգամ եմ լինում: Ռիման մերժեց եւ ուզեց տուն գնալ, կամաց կամաց գնում ենք չմոռանամ ասելու ձեռք ձեռքի տուած ճիշդ մանկապարտէզի երեխաների նման մէկ մէկ էլ շարժելով աջ կամ ձախ գնում ենք անհոգ եւ անվախ բոլորից, երբ հասանք Սպանդարեան փողոցի անկիւնը Ռիման ինձ մօտեցաւ աւելի շատ համարեա իրար կպած եւ ուզում էր ինչ որ բան անէինք, սակայն անցորդները խանգարում էին մեզ եւ ցոյց տուեց իր տունը որ գտնւում էր 100 մեթր այն կողմ: Ռիման ձեռքը երկարեց, ինչպէս հին բարեկամ եւ բաժանուեցինք, մի քանի քայլ գնալուց յետոյ Ռիման շրջուեց, դարձեալ ձեռքը թափ տուեց եւ մի քանի անգամ ձեռքերը բերանին տանելով թեւերը բաց շարժելով հեռացաւ:*

*Յաջորդ օրը զարաժի հաշուապահ Մարտիրոսը գնում է գրասենեակ հաշուապահական գործերի համար, Ռիման հարցնում է իմ մասին, եւ անկեղծօրէն խոստովանելով ամէն ինչ, յատուկ բարեւներ է ուղարկում ինձ: Երբ զարաժ վերադարձաւ, Մարտիրոսը կանչեց եւ պատմեց ամէն ինչ:*

*- Պետրոս ի՞նչ ես ասել մեր ռուս աղջկան, ես կարծեցի մի բան է եղել որի մէջ ես մեղաւոր եմ, պատասխանեցի թէ ոչ մի բան եւ սկսեցին խնդալ, այդ օրը ներկայ էր քեռայրս, նա էլ մի պահ զարմացաւ թէ ինչի մասին է խօսքը, երբ ամէն ինչ պարզուեց քեռայրս դարձեալ սկսեց խնդալ եւ այդ օրուանից յետոյ Ռիմայի մասին խօսք որ լինէր թէկուզ մեր տանը քեռայրս միշտ ասում էր ռուս քոյրիկ բոլոր ռուս աղջիկներին: Ծիծաղ:*

*Դարձեալ Կիրակի օրը Ռիման երկու հրաւիրատոմս առնելով ինձ տարաւ կինօ Մոսկուայի դիմացի շէնքը, երբ ցուցատախտակը կարդացի տեսայ ռուսական թատրոն, մի պահ ես կանգնեցի թէ ես ինչ պիտի անեմ այս ռուսական թատրոնում, հրաժարուեցի, չեմ մտնի ասացի, հիմա թէ ինչերէն էր այդ իմ խօսքը ես էլ չեմ յիշում, բայց ինքը Ռիման հասկացաւ որ ես ռուսերէն չեմ հասկանալու ինչ պիտի անեմ ներսում, Ռիման ինձ ստիպում է որ ներս մտնել թեւիցս բռնած ներս է քաշում, ամաչում եմ չեմ կարող մի բան ասել, եւ քաղաքավարութեան զոհ գնալով հետեւեցի նրան, բաճկոնները հանեցինք եւ գրաւեցինք մեր տեղերը, դարձեալ խօսում ենք ձեռքերով մէկ մէկ էլ գլխով հայերէնը պարզ է ինձ համար, իսկ ինքը մէկ մէկ գրպանից հանում էր մի թուղթ եւ կարդում էր որից յետոյ խօսում էր հայերէն, վերջում իմացայ որ ռուսերէնը թարգմանել է հայերէն: Մինչեւ թատրոնի վերջանալը, ես էլ թատրոնի հետ վերջացայ, թէ հայերէն եւ թէ արաբերէն հազար ու մի հայհոյանք թափեցի ռուսներին եւ թէ թատրոնին ի հարկէ մտքի մէջ:*

*Շար.ը էջ 19*


ՀԱՆԴԻՍԱՒՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՄԷՋ

ԿԻՐԱԿԻ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 15, 2006

Պիտի Պատարագէ ու Քարոզէ
Թեմիս Բարեխնամ Առաջնորդ

**ԳԵՐՇ. Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԷՐՏԷՐԵԱՆ**

Առընթերակայութեամբ՝
Տէր Նարեկ Ա. Քհնյ. Մատարեան

Սկիզբը Ժամերգութեան Առաւօտեան ժամը 9:30 ին
Ս. Պատարագ ժամը 10:30 ին

Սուրբ Պատարագի հոգեզմայլ երգեցողութիւնը պիտի կատարէ

**Խաչատուրեան Դպրաց Դաս Երգչախումբը**
**(Երգչախումբի հիմնադրութեան 28-րդ տարեդարձն է)**
Ղեկավարութեամբ՝
Բրշ. Ստեփան Սրկ. Կէօզիւմեան
Երգեհոնահարութեամբ՝
Ովսաննա Մեղրիկեան

Արարողութենէն յետոյ տեղի պիտի ունենայ

**«Սիրոյ Սեղան»**

Սիրով կը հրաւիրենք հաւատացեալները մասնակցելու
Ս. Պատարագին եւ Սիրոյ Սեղանին:

Ձեր տեղերը ապահովելու համար հաճեցէք
հեռաձայնել Եկեղեցւոյ գրասենեակ հետեւեալ թիւով:

(323) 269-0907

Հովիւ եւ Ծխական Խորհուրդ Սուրբ Սարգիս Եկեղեցւոյ

# «ՍՓԻՒՌՔԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՈՍԿԵԴԱՐԸ» ԱՆՈՒԱՆԵՑ ԹՈՒՐՔԻԱ

*Շարունակուած էջ 1-էն*

վրայ։

Թուրքիա կանխօրօք կը զգուշացնէր Ֆրանսան թէ իր հողամասին վրայ կառուցուելիք ճարտարարուեստական հիմնարկութիւններէն կրնար զրկել զինք։ Բաց աստի, Ֆրանսայի մէջ Շիրագի եւ երեսփոխաններու վրայ ճնշում բանեցնելու առաջադրութեամբ Թուրքիա շարժման անցած էր արդէն։ Ան Փարիզ առաքած էր թուրք անձնաւորութիւններ՝ երեսփոխաններ Մեհմէտ Տիլկէրը եւ Եաշար Հազըրը։ Նոյնպէս դէպի Փարիզ գործուղղած էր երեսփոխաններ Օնուր Էօյմէնը, Շիւքրիւ Էլթքտաղը եւ Մուսա Սըվանըօղլուն՝ անհրաժեշտը տնօրինելու համար նախատեսուած ճնշումներու ուղղութեամբ։

Անշուշտ հիմնական նշանակութիւն ունէին այդ հարցադրումներն ու մտահոգութիւնները։ Ֆրանսա ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհուրդի եւ Մեծ ութնեակի երկրներու գլխաւոր անդամներէն էր, որուն դիրքորոշումներէն կախեալ կրնար ըլլալ հիմնադրոյթներու որդեգրումը։ Ֆրանսայի օրինակը վարակիչ կրնար դառնալ Ութնեակի մնացեալ երկիրներուն համար։

Ֆրանսան առաջին անգամը չէր որ ենթակայ կը դառնար թուրքական սպառնալիքներուն։ Ֆրանսա միշտ կանգնած մնացած է իր ժողովրդավարական սկզբունքներուն վրայ՝ յանուն ժողովուրդներու ազատ ինքնորոշման, ազգային արժանապատութեան ու արդարութեան պահպանման դիրքերէ մեկնած։

Պատուիրակութեան այցելած առաջին վայրը հանդիսացաւ Ծիծեռնակաբերդը, ուր Հայոց ցեղասպանութեան թանգարանի յուշամատեանին մէջ նախագահը իր զգացումները ամփոփեց մէ՛կ բառի՝ «Յիշի՛ր» Պատգամին մէջ։ Շիրագ չվարանեցաւ երբեք Ցեղասպանութեան զոհերու յուշակոթողին ծաղիկներ դնելու, նաեւ՝ յիշատակի եղեւնի մը տնկելու Հայոց ցեղասպանութեան յուշահամալիրի յուշածառուղիին վրայ։ Երեւանի Ֆրանսական հրապարակի բացման հանդիսութեան, Շիրաք, հանգամանօրէն շեշտեց հայ-ֆրանսական դարաւոր բարեկամութիւնը, երկկողմ տնտեսական, մշակութային, միջխորհրդարանական եւ միջտարածքային Հայաստան-Ֆրանսա համագործակցութեան անհրաժեշտութիւնը եւ այլ հիմնահարցերու լուծման ֆրանսայի բերելիք աջակցութիւնը։

Նոյնքան նշանակալից կարելի է համարել Ժագ Շիրագ եւ Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Բ-ի հանդիպումը։ Ֆրանսական պետութեան՝ հայոց Ցեղասպանութեան ճանաչումին կապակցութեամբ Հայոց Վեհափառի շնորհակալական խօսքին անդրադառնալով՝ Ժագ Շիրագ դիտել տուաւ, թէ Ֆրանսան պէտք է առաջին երկիրներէն մէկն ըլլար, որ ճանչցաւ Հայոց ցեղասպանութիւնը օրէնքի միջոցով։ ... Յոյս ունիմ, ըսաւ Շիրագ, որ նման ոճիրները դատապարտելով՝ անոնք չեն կրկնուիր ապագային»։

Իբրեւ ամերիկահայ համայնք մեր ամբողջական երախտագիտութիւնը կը յայտնենք Ֆրանսական պետականութեան, որ նիշդ է քիչ մը ուշ, բայց մեծագոյն երկիրներէն առաջինը հանդիսացաւ, որ ճանչցաւ հայոց Ցեղասպանութիւնը, դատապարտեց ցեղասպան Թուրքիան, ու անոր Եւրոմիութեան անդամակցութիւնը պայմանաւորեց Ցեղասպանութեան ճանաչումով։ Երկիրը ներկայիս կը պատրաստուի Հոկտեմբերի 12-ի «Ցեղասպանութեան ուրացման համար» Ֆրանսայի Խորհրդարանի կողմէ պատիժ սահմանող օրինագծի քուէարկութեան։ Կասկած չունինք որ «Եղբայրութեան», «հաւասարութեան» ու «ազատութեան» խորհրդանիշ Ֆրանսան կը գրանցէ ե՛ւ իր այս օրինագիծը։ Իր այս վարքագծով, Ֆրանսա պիտի արժանանայ համամարդկային գնահատութեան։

Մեր անխառն մաղթանքը պիտի ըլլար այն, որ այլ մեծեր ընթանան Ֆրանսայի օրինակով՝ մարդկութեան խնայելու համար նոր զանգուածային ջարդեր, ցեղասպանութիւններ։

Մեր գնահատանքի խօսքն ունինք նաեւ մեր հայրենի ազգաբնակչութեան։ Ան՝ կարգի՛ն գնահատեց եւ աննախընթաց ջերմութիւն ցուցաբերեց Ժագ Շիրագին ու անոր գլխաւորած պետական պատուիրակութեան, անոնց պաշտօնական այցով Հայաստան գտնուելուն ուրախ առիթով։ Ան բարձր պահեց հայու աւանդական հիւրամեծարութիւնը, արժանապատուութիւնը եւ ազգային վարկը։ Մեր հայրենի բարոյապէս, նիւթապէս եւ իրաւականօրէն ընկճուած ազգաբնակչութիւնը դոյզն չափով չզգացուց այցելուներուն իր տխուր առօրեան։ Մեծ եղաւ պատուիրակութեան կրած տպաւորութիւնը հայու հիւրընկալ վերաբերմունքէն։

Մեր ակնկալութիւնները շատ են արտաքին աշխարհէն՝ հայրենիքը կանգուն պահող մեր հիմնական կառոյցները զօրացնելու համար։

Իսկ ի՞նչ կ՚ընենք մենք, որպէս Հայրենիք, մեր բարոյական վարկը բարձր պահելու համար միջազգային թատերաբեմին վրայ, ուր ամէն ոք ծանօթ է մեր ներքին խոհանոցին։

**Jessica Demirdjian**
REALTOR®

Prudential

**California Realty**
9878 Hibert Street
San Diego, CA 92131
Bus 858 653-6400 Fax 858 653-6440
Cell 619 846-7738 jessicad@prusd.com
An independently owned and operated member of Prudential Real Estate Affiliates, Inc.

Wahib's
MIDDLE EAST RESTAURANT
مطعم الشرق
MEDITERRANEAN LEBANESE FOOD

COME IN AND ENJOY OUR PATIO AND THE FINEST SHISA "HOOKAH"



Wahib

CATERING FOR ALL OCCASION



MOUHAMAD SALEM
& HIS BAND ~ VARTAN / NAZO & AMIR

FAMILY ENTERTAINMENT
BANQUET HALL
EVERY
FRIDAY ~ & ~ SATURDAY
NIGHT
INTERNATIONAL ~ ARABIC
CALL FOR RESERVATION



BELLY~DANCING

910~E.MAIN ST,ALHAMBRA,CA.
TEL 626-281-1006 626-587-1048
FAX 626-281-3641

PHOTO / CONCEPT- J / D - 2006 ©TEL( 626 ) 795-4493

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ■ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

ՀԲԸՄ 100 ՏԱՐԻ • YEARS AGBU

*Բեղմնաւոր Անցեալ, Լուսաշող Ապագայ։*
*Proud Past, Exciting Future.*

AGBU Young Professional Los Angeles

# arvest 2006

Merging of the Arts: Paris - LA

It gives the AGBU Young Professionals of Los Angeles great pleasure to introduce to you **ARVEST 2006** at its **10th Anniversary**. Arvest has become the premiere event in Southern California that not only promotes well-known established artists, but also seeks out and supports young and emerging exceptional local talent. This year's theme parallels the "Centennial Celebrations" of the AGBU, planned for Paris in December. **"Merging of the Arts: Paris – LA"** brings together the elegance & richness of Parisian culture with the eclectic diversity of Los Angeles. This extraordinary event will feature **classical paintings**, **animation**, **sculpture**, **photography**, and a **fusion of music**, **performance**, **and fashion**! Featured artists include Carzou, Jansem, Asadour, Kazanjian, Giraco, the Beylerians, Les Vagabonds, and many more.

**Experience the passion of Paris and the excitement of Los Angeles in one memorable evening!**

**October 14th**
**7:00 pm Gala Exhibition**
**Los Angeles Union Station**
**800 N. Alameda St., Los Angeles, CA 90012**

Gala/Exhibit: A pastiche of live musical and artistic performances and interactive exhibits. An engaging evening of eloquent discourse and culinary delight.

Open Exhibit: Visual arts only.
October 14th, 1:00 pm - 4:00 pm.
Open to public.

Tickets:
$100 Donation
($80 if reserved and paid by October 9th)

Heavy Hors D'oeuvres Buffet Stations
and Open Bar will be served.

Payment:
To reserve tickets in advance, contact the AGBU Center at 626-794-7942, or Hrair Assilian at hrair@agbuypla.org

To reserve with a credit card please go to http://www.agbuypla.org/arvest-2006-reservation/

Benefit Cause:
A portion of the exhibit proceeds will benefit the art programs for the youth of the community through the "Generation Next" mentorship program. For additional sponsorship opportunities please contact Anahid Andreassian at anahid@agbuypla.org

# AGBU IN ITS SECOND CENTURY.

## A Centennial Symposium.

**"Tribute to the Past - Pathways to the Future"**

*Presented by:*
AGBU SOUTHERN CALIFORNIA DISTRICT COMMITTEE
*In Cooperation with*
USC INSTITUTE OF ARMENIAN STUDIES
*Part of USC College of Letters, Arts & Sciences*

## SATURDAY, OCTOBER 28, 2006

9:30 AM – 3:30 PM
University of Southern California, Town and Gown
Figueroa and Exposition - Gate 3 Entrance
Los Angeles, CA

**Overview of Global Activities of AGBU**
**with a focus on United States and Armenia**

The Seminar will Address:
- **Organizational Structure**
- **Cultural and Educational Activities**
- **Sports, Youth, and Young Professionals Programs**
- **New Challenges and Opportunities**
- **Constituency Development**

Paper Presentations by:

**DR. R. HRAIR DEKMEJIAN**
*(USC)*

**MS. RAMELA ABBAMONTIAN**
*(PhD Candidate, UCLA)*

**DR. MIHRAN AGBABIAN**
*(President Emeritus, American University of Armenia)*

**DR. HARUTYUN ALEXANYAN**
*(Armenian State Pedagogical University, Yerevan)*

**REV. FR. KTRIJ DEVEJIAN**
*(Mother See of Holy Etchmiadzin)*

**DR. MATTHEW JENDIAN**
*(CSU Fresno)*

**DR. SILVA KARAYAN**
*(California Lutheran University)*

**DR. ANI MOUGHAMIAN**
*(LA Unified School District)*

**DR. ANI YAZEDJIAN**
*(Texas State University)*

*Special Guest Speaker:*
**HON. PAUL R. IGNATIUS**
*Former*
*Secretary of the Navy - Under Secretary of the Army - Assistant Secretary of Defense*

Complimentary breakfast, lunch and snacks will be served
**Attendance is by reservation only – Seating is limited**
Reservation Deadline: October 18, 2006
Please RSVP at: AGBU Alex Manoogian Center
(626) 794-7942 or seminar@agbuca.org


## AGBU CENTENNIAL SPONSORS

Commerce Casino LOS ANGELES
CROWNE PLAZA HOTELS & RESORTS
6131 E. Telegraph Rd. • Commerce, CA 90040 • 323.721.2100 • 714.879.2100 • commercecasino.com

Bank of Orange County is a full service bank prepared to meet the needs of both small and large businesses.
BANK of ORANGE COUNTY
BOC
MEMBER FDIC
A Division of Placer Sierra Bank
Commercial Real Estate
Term Loans and Lines
Free Business Checking
High Rate Money Market
Contact:
Gus Ghusayni
Senior Vice President
411 N. Central Avenue
Glendale, CA 91203
bankoforangecounty.com
(818) 548-2720

# ՄԱՐԶԱԿԱՆ

## ՖՈՒԹՊՈԼ - ԵՒՐՕ-2008
## ՀԱՅԱՍՏԱՆ-ՖԻՆԼԱՆՏԱ ՀՈԿՏԵՄԲԵՐ 7-ԻՆ
## ՍԵՐՊԻԱ-ՀԱՅԱՍՏԱՆ ՀՈԿՏԵՄԲԵՐ 11-ԻՆ

*Հայաստանի ազգային հաւաքականի գլխաւոր մարզիչ Եան Պորտերֆիլտը հրապարակած է Հոկտեմբերի 7-ին տեղի ունենալիք Հայաստան-Ֆինլանտա եւ Հոկտեմբեր 11-ին տեղի ունենալիք Սերպիա-Հայաստան հանդիպումներու համար հաւաքի հրաւիրուած Հայաստանի ազգային հաւաքականի ֆութպոլիստներու անունները:*

*Եւրօ-2008-ի որակաւորման փուլի յառաջիկայ հանդիպումներուն նախապատրաստուելու համար Հայաստան հրաւիրուած են դարպասապահներ՝ Գէորգ Կասպարովը, Արմանդօ Համբարձումեանը, Ֆելիքս Յակոբեանը, Էդել Ապուլա Էդիմա Բետեն, պաշտպաններ Կարէն Դոխոյեանը, Ռոբերտ Արզումանեանը, Սարգիս Յովսէփեանը, Եղիշէ Մելիքեանը, Ալեքսանդր Թադեւոսեանը, Վալերի Ալեքսանեանը, Խոսէ Բիլիբիոն, Արմէն Տիգրանեանը, կիսապաշտպաններ Կարէն Ալեքսանեանը, Աղուան Մկրտչեանը, Լեւոն Պաչաճեանը, Արման Քարամեանը, Դաւիթ Գրիգորեանը, Արթուր Մինասեանը, Սամուէլ Մելքոնեանը, յարձակուողներ Արմէն Շահգելդեանը, Արա Յակոբեանը, Արամ Յակոբեանը, Էդգար Մանուչարեանը, Նշան Էրզրումեանը:*

*Հաւաքական հրաւիրուած են նաեւ Արտաւազդ Քարամեանը, Ռոմիկ Խաչատրեանը, Արտաշէս Բաղդասարեանը, որոնք, ըստ վերջիններիս ակումբներէն ստացուած պաշտօնական գրութիւններու, վնասուածքներ ունին եւ չեն կրնար ժամանել Հայաստան:*

## ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ
## ԱՐԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ ՊՐՈՆԶԵ ՄԵՏԱԼԱԿԻՐ

*24-ամեայ հայ ծանրորդ Արա Խաչատրեանը Տոմինիկայի մէջ ընթացող ծանրամարտի աշխարհի առաջնութեան 77 կգ քաշայիններու պայքարին գրաւուած է 3-րդ տեղը՝ արժանանալով պրոնզէ մետալին:*



*Պրոնզէ մետալակիր Արա Խաչատրեան*

*Պոկում վարժութեան մէջ Արան բարձրացուցած է 165 կգ, իսկ հրում վարժութեան՝ 192 կգ եւ երկամարտի 357 կգ արդիւնքով հանգրուանած է 3-րդ դիրքի վրայ՝ ընդամէնը 2 կգ զիջելով 2-րդ տեղը գրաւեցրած չինացի Լի Հոնգլիին, իսկ առաջնութիւնը նուաճած է Թուրքիայի ներկայացուցիչ Տաներ Սագիրը:*

*Մեծ էին սպասելիքները 69կգ քաշային կարգին մէջ հանդէս եկող Արսէն Ղազարեանէն եւ Տիգրան Մարտիրոսեանէն, սակայն ընդհանուր հաշուարկով մեր ծանրորդները չկարողացան արժանանալ մետալներու:*

*Հրում վարժութեան մէջ Արսէն Ղազարեանը ցոյց տալով 178 կգ արդիւնք արժանացաւ փոքր արծաթէ մետալի: Ցաւոք, պոկում վարժութեան մէջ Ղազարեանը 0 էր ստացած, այլապէս ընդհանուր հաշուարկով առնուազն պրոնզէ մետալի կ'արժանանար:*

*Իսկ Տիգրան Մարտիրոսեանը երկամարտով ցոյց տալով 306 կգ արդիւնք եւ գրաւեց 6-րդ տեղը:*

*54 կգ քաշայիններու պայքարին Արսէն Թամրազեանը գրաւած է 14-րդ տեղը:*

## ԻՐԱՆԱՀԱՅ ԿԵԱՆՔ

*Շարունակուած էջ 13-էն*

*առեւտրա-արդիւնաբերական ազատ գօտիների հետազօտման ու քննարկման համար:*

*Յիշեալ պատուիրակութեանն անդամակցում է Իսլամական խորհրդարանում Սպահանի եւ հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանը:*

*17 հոգուց բաղկացած պատուիրակութեան անդամներից 13ը ընտրուել են Իսլամական խորհրդարանի Տնտեսութեան յանձնաժողովից եւ 4ը՝ այլ յանձնաժողովներից:*

***

*Թեհրանի առաջնորդ Գերշ. Տ. Սեպուհ Արք. Սարգսեանը Օգոստոս 10ին հովուական այցելութիւն է տուել Ռաշտի եւ Անզալիի փոքրաթիւ հայ համայնքներին: Ռաշտում Սրբազանը հանդիպել է տեղի ազգայիններին եւ յորդորել է պահել մեր հաւատքը ու ներկաներին նուիրել է կրօնական գրքեր: Անզալիի Ս. Աստուածածին եկեղեցում պատարագ է մատուցել թեմակալ առաջնորդը եւ հայրական պատգամ է յղել եկեղեցում ներկայ հաւատացեալներին:*

***

*Իրանահայ բարերար Էդիկ Մէջլումեանը որոշել է Ուրմիա քաղաքի Անսար աւանում կառուցել 12 դասարաններից բաղկացած մի դպրոց եւ նուիրել տեղի կրթական հիմնարկին: Բարերարը դպրոցի կառուցման համար յատկացրել է 300 միլիոն թուման: Օգոստոս 12ին տեղի է ունեցել դպրոցի հիմնարկէքը, որին մասնակցել են հայ եւ պարսիկ պաշտօնատար անձինք:*

***

*Թեհրանահայ 30 գերազանց աշակերտ-աշակերտուհիները չորս պատասխանատուների ուղեկցութեամբ, Օգոստոս 14ին մեկնել են Հայաստան, շրջելու եւ ծանօթանալու հայրենիքի տեսարժան վայրերին, շփուելու հայրենաբնակ դպրոցականների հետ:*

*Մեկնման օրը, առաւօտեան ժամը 8ին, նրանք հաւաքուել են Թեհրանի հայոց առաջնորդարանում եւ հանդիպել Տ. Սեպուհ Ս. Արք. Սարգսեանին: Սրբազան Հայրը գնահատել է հայ աշակերտուհիներին եւ իր գոհունակութիւնն է յայտնել այս օգտակար ճամբորդութեան համար: Ապա, Սեպուհ Սրբազանը աշակերտներին նուիրել է կրօնական գրքեր, օրհնել եւ «Պահպանիչ»ով հրաժեշտ է տուել դպրոցականներին: Առաջնորդարանի մուտքի առջեւից մեկնողները հանրակառքով ուղեւորուել են մայր հայրենիք:*

# ԵՒՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ

### *ԱՆԳԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ*

Անգլիոյ ֆութպոլի առաջնութեան եօթերորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|---|---|---|---|
| Պոլթըն - Լիվըրփուլ | 2-0 | Ուէսթ Համ - Ռիտինկ | 0-1 |
| Էվըրթըն - Մանչեսթըր Սիթի | 1-1 | Մանչեսթըր Եուն. - Նիւքէսըլ | 2-0 |
| Չելսի - Ասթոն Վիլլա | 1-1 | Թոթենհամ - Փորթսմութ | 2-1 |
| Չարլթըն - Արսենալ | 1-2 | Պլէքպըրն - Ուիկան Աթլեթիք | 2-1 |
| Շեֆիլտ Եուն. - Միտըլզպորօ | 2-1 | Ուաթֆորտ - Ֆուլհամ | 3-3 |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Մանչեսթըր Եունայթըտ | 7 | 5 | 1 | 1 | 14-4 | 16 |
| Չելսի | 7 | 5 | 1 | 1 | 12-4 | 16 |
| Արսենալ | 7 | 4 | 2 | 1 | 8-4 | 14 |
| Պոլթըն | 7 | 4 | 2 | 1 | 7-3 | 14 |
| Փորթսմութ | 7 | 4 | 1 | 2 | 10-3 | 13 |
| Էվըրթըն | 7 | 3 | 4 | 0 | 12-6 | 13 |
| Ասթոն Վիլլա | 7 | 3 | 4 | 0 | 9-4 | 13 |

### *ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ*

Գերմանիոյ ֆութպոլի առաջնութեան վեցերորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|---|---|---|---|
| Տորթմունտ - Հանովըր-96 | 2-2 | Վոլսպուրկ - Պայերն Միւնիխ | 1-0 |
| Այնթ. Ֆրանքֆորթ - Համպուրկ | 2-2 | Վարտըր Պրէմըն - Մէօնշընկլատպախ | 3-0 |
| Նիւրեմպըրկ - ՖՍՎ Մայնց | 1-1 | Հերթա Պերլին - Շթութկարթ | 2-2 |
| Աախըն - ՎՖԼ Պոխում | 2-1 | Պ. Լիվըրքուզըն - Շալքէ | 3-1 |
| Արմ. Պիլըֆէլտ - Քոթպիւս | 3-1 | | |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Հերթա Պերլին | 6 | 3 | 3 | 0 | 12-4 | 12 |
| Պայէրն Լիվըրքուզըն | 6 | 4 | 0 | 2 | 10-6 | 12 |
| Նիւրեմպէրկ | 6 | 2 | 4 | 0 | 7-3 | 10 |
| Վարտըր Պրէմըն | 6 | 3 | 1 | 2 | 12-9 | 10 |
| Պայէրն Միւնիխ | 6 | 3 | 1 | 2 | 7-5 | 10 |
| Շալքէ-04 | 6 | 3 | 1 | 2 | 7-6 | 10 |
| Աախըն | 6 | 3 | 0 | 3 | 10-9 | 9 |

### *ԻՏԱԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ*

Իտալիայի ֆութպոլի առաջնութեան հինգերորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|---|---|---|---|
| Աթալանթա - Ռեճինա | 1-1 | Քալիարի - Ինթէր Միլան | 1-1 |
| Թորինօ - Լացիօ | 0-4 | Ֆիորենթինա - Քաթանիա | 3-0 |
| Ա. Սէ. Միլան - Սիենա | 0-0 | Ա. Էս. Ռոմա - Էմփոլի | 1-0 |
| Մեսինա - Լիվորնօ | 0-1 | Ուտինեզէ - Ասքոլի | 0-0 |
| Սամտորիա - Փարմա | 3-2 | Քիեւօ - Փալերմօ | 0-1 |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ա. Էս. Ռոմա | 5 | 4 | 1 | 0 | 10-6 | 13 |
| Փալերմօ | 5 | 4 | 0 | 1 | 12-9 | 12 |
| Ինթէր Միլան | 5 | 3 | 2 | 0 | 10-7 | 11 |
| Էմփոլի | 5 | 2 | 2 | 1 | 5-3 | 8 |
| Ուտինեզէ | 5 | 2 | 2 | 1 | 6-4 | 8 |
| Մեսինա | 5 | 2 | 2 | 1 | 6-4 | 8 |

### *ՖՐԱՆՍԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ*

Ֆրանսայի ֆութպոլի առաջնութեան ութերորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|---|---|---|---|
| Սոշօ - Լիոն | 0-1 | Վալանսիէ - Պորտօ | 2-0 |
| Լիլ - Նիս | 1-0 | Մարսէյլ - Թուլուզ | 3-0 |
| Սըտան - Ռընէ | 1-0 | Նանսի - Լանս | 2-1 |
| Լօրիան - Թրուա | 0-0 | Սէնթ Էթիէն- Փարիզ Սէն Ժերմէն | 1-0 |
| Մոնաքօ - Լը Մանս | 2-1 | Օքսէռ - Նանթ | 1-0 |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Լիոն | 8 | 7 | 1 | 0 | 20-6 | 22 |
| Մարսէյլ | 8 | 6 | 1 | 1 | 16-4 | 19 |
| Նանսի | 8 | 4 | 3 | 1 | 9-5 | 15 |
| Սէնթ Էթիէն | 8 | 4 | 2 | 2 | 12-11 | 14 |
| Լիլ | 8 | 4 | 1 | 3 | 13-10 | 13 |
| Լանս | 8 | 4 | 1 | 3 | 12-10 | 13 |

### *ՍՊԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ*

Սպանիայի ֆութպոլի առաջնութեան հինգերորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|---|---|---|---|
| Աթլեթ. Պիլպաօ - Պարսելոնա | 1-3 | Վալենսիա - Կիմնասթիք | 4-0 |
| Էսփանիոլ - Օսասունա | 0-0 | Ռէալ Մատրիտ - Աթլեթ. Մատրիտ | 1-1 |
| Սեւիլլա - Կեթաֆէ | 1-0 | Ռասինկ - Սելթա Վիկօ | 1-1 |
| Տեփ. Քորունա - Ռէալ Սոսիէտ | 2-0 | Ռէքրէաթիւօ Հուէլվա - Ռէալ Պեթիս | 2-0 |
| Մայորքա - Վիլզարէալ | 1-2 | Սարակոսա - Լեվանթէ | 2-2 |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Պարսելոնա | 5 | 4 | 1 | 0 | 13-4 | 13 |
| Վալենսիա | 5 | 4 | 1 | 0 | 10-2 | 13 |
| Սեւիլլա | 5 | 4 | 0 | 1 | 12-5 | 12 |
| Ռէալ Մատրիտ | 5 | 3 | 2 | 0 | 8-2 | 11 |
| Աթլեթ. Մատրիտ | 5 | 3 | 1 | 1 | 8-4 | 10 |
| Ռէքրէաթիւօ Հուէլվա | 5 | 3 | 1 | 1 | 7-4 | 10 |

# ՄԱՀԱԶԴ



***ՊԵՏՐՈՍ ՏԱՐԱՔՃԵԱՆ***
***(1940-2006)***

*Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր սիրեցեալ հօր, եղբօր, մօրեղբօր եւ ազգականին՝ ՊԵՏՐՈՍ ՏԱՐԱՔՃԵԱՆի մահը որ պատահեցաւ Կիրակի, Հոկտեմբեր 1, 2006, կէսօրէ ետք ժամը 3:30ին իր բնակարանին մէջ, յետ երկարատեւ հիւանդութեան:*

*Տան Կարգը տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի, 4 Հոկտեմբեր, 2006, երեկոյեան ժամը 7:00ին Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ (2215 East Colorado Blvd. Pasadena):*

*Յուղարկաւորութիւնը տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, 5 Հոկտեմբեր, 2006, կէսօրէ ետք ժամը 1:30ին Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, (Փասատինա) ուրկէ ետք հանգուցեալի մարմինը պիտի տեղափոխուի Hollywood Hills Forest Lawn գերեզմանատան մէջ, 6410 S. Forest Lawn Dr. Glendale, CA:*

*Սգակիրներ՝*
*Որդին՝ Տէր եւ Տիկ. Արայիկ եւ Արմինէ Տարաքճեան եւ զաւակունք*
*Որդին՝ Տիար Յարութ Տարաքճեան*
*Քոյրը՝ Այրի Տիկ. Անժէլ Օհանեան եւ զաւակունք (Աւստրալիա)*
*Քոյրը՝ Այրի Տիկ. Վանուհի Տարաքճեան եւ զաւակունք (Լիբանան)*
*Քոյրը՝ Տէր եւ Տիկ. Խաչատուր եւ Վիքթորիա Նալպանտեան*
*Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Լեւոն եւ Կիւլենիա Տարաքճեան եւ զաւակունք*
*Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Խաչիկ եւ Ովսաննա Տարաքճեան եւ զաւակունք (Աւստրալիա)*
*Տէր եւ Տիկ. Նիկողոս եւ Յասմիկ Նալպանտեան եւ զաւակունք (Փարիզ)*
*Տէր եւ Տիկ. Թորգոմ եւ Սաթիկ Կոտալազեան եւ զաւակունք*
*Տէր եւ Տիկ. Աշոտ եւ Վարդուհի Սիմոնեան եւ զաւակունք*
*Տէր եւ Տիկ. Փօլ եւ Նուարդ Պէքէրէճեան եւ զաւակունք (Փարիզ)*
*Տէր եւ Տիկ. Պօղոս եւ Անահիտ Սապունճեան եւ զաւակունք*
*Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Սրբուհի Ատամեան եւ զաւակունք*
*Տէր եւ Տիկ. Մկրտիչ եւ Լուսինէ Նալպանտեան եւ զաւակունք*
*Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Հայկանուշ Տարաքճեան եւ զաւակունք*
*Տէր եւ Տիկ. Արայիկ եւ Սահականուշ Տարաքճեան եւ զաւակունք*
*Տէր եւ Տիկ. Յովհաննէս եւ Անայիս Գալայճեան եւ զաւակունք (Լիբանան)*
*Տէր եւ Տիկ. Ժան եւ Ատրինէ Ճանսըզեան եւ զաւակունք (Գանատա)*
*Տէր եւ Տիկ. Համբարձում եւ Սրբուհի Յակոբեան եւ զաւակունք*
*Տէր եւ Տիկ. Արմենակ եւ Մարիամ Գոճանեան եւ զաւակունք (Լաս Վեկաս)*
*Տէր եւ Տիկ. Յարութ եւ Ռոզա Գօչունեան եւ զաւակունք*
*Եւ համայն Տարաքճեան, Կոտալազեան, Ոսկերիչեան, Աւոյեան, Տէր-Վարդանեան, Յարութիւնեան, Մուրատեան, Գիրիշեան, Ճէճէյեան, Մեսրոպեան ընտանիքները, հարազատները եւ բարեկամները:*
*Կը խնդրուի հանգուցեալի յիշատակը յարգողներէն ներկայ գտնուիլ:*

# ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ



***ԱՆԴՐԱՆԻԿ ԹՈՄՊՈՒԼԵԱՆ***

*ԱՆԴՐԱՆԻԿ ԹՈՄՊՈՒԼԵԱՆի մահուան քառասունքին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի, Կիրակի, Հոկտեմբեր 8, 2006ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, Փասատինա, 2215 East Colorado Blvd. Pasadena:*

*Հոգեհանգիստէն ետք հոգեճաշ պիտի մատուցուի «Աթլանթիս» ճաշարանին մէջ, 162 Sierra Madre Blvd. Pasadena, 91107, հեռաձայն՝ (626) 449-4599:*

*Խնդրողներն են՝*
*Այրին՝ Մարկօ Թոմպուլեան եւ զաւակները՝ Նուպար եւ Քրիսթին,*
*Դուստրը եւ փեսան՝ Վաչէ եւ Մարօ Պազալեան,*
*Եղբայրը՝ Վրէժ եւ Արմիկ Թոմպուլեան եւ զաւակները՝ Սինթիա եւ Սիլվիա,*
*Եղբայրը՝ Խաչիկ Թոմպուլեան եւ զաւակները,*
*Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Սիլվիա Բրինձեան:*
*Եւ Թոմպուլեան, Պազալեան, Պըշարա, Պոյաճեան, Տէր-Յարութիւնեան ընտանիքներ եւ համայն ազգականներ, բարեկամներ եւ հարազատներ:*

# ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՍԻՐՈՅ ՅՈՒՇԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

*Շարունակուած էջ 1-էն*

*Յաջորդ Կիրակի օրը գնացի մեր հայկական օփերան ուրտեղ ներկայացւում էր Անուշ օփերան, ներս մտանք գրաւելով մեր տեղերը, Ռիման կանչեց աղջկան եւ վերցրեց օրուայ ծրագիրը, շան աղջիկը կարդաց Անուշ օփերայի պարունակութիւնը եւ հանգիստ նայեց մինչեւ աւարտելը, ցաւօք սրտի ռուսական թատրոնում հայերէնով գրուած ոչինչ չկար: Ռիման մի օր ինձ տարաւ բարեկամի տունը, տեսայ բոլորը զինուորականներ էին գնդապետ, մայոր եւ այլ պաշտօնի մարդիկ սեղանը ծայրից ծայր լեցուն էր խմիչքներով եւ ուտելիքներով, այդ օրերին մեր տներում նման բան չկար: Մի րոպէ վախեցայ երբ տեսայ զինուորականներին, քանի որ ստալինեան վախը Պաթումից ներարկել էին մեր հայաստանցի եղբայները: Երբ իմացան որ ես Թել Աւիւ Եաֆֆա քաղաքից եմ էլ աւելի բարեկամաբար էին խօսում ինձ հետ: Ռիման տեսաւ որ մեր գնալու ժամանակը մօտեցել է, միասին դուրս եկանք, բարեկամները շատ գոհ էին մեր երկուսի ներկայութեան համար: Երբ դուրս եկանք հարցրեցի թէ այս զինուորականները ովքեր էին:*

*-Պետրոս, ես Ստալինգրատ եմ ծնուել, ծնողներս զինուորական են եղել, բոլորը մահացել են ինձ էլ որբանոց են տարել: 1945 թուին իմ հարազատներս գտել են եւ բերել Երեւան:*

*Մի քանի օր յետոյ երբ նորից հանդիպեցինք իրար հետ, Ռիման ներկայացրեց համալսարանի վճակագիրը, տեսնեմ բոլոր թուանշանները գերազանց էին շատ խելացի աղջիկ էր սակայն ինձ համար կարեւորը օտար էր եւ միշտ յիշում էի որ ես հայ եմ: Եւ մի գուցէ այդ պատճառով մենք իրար հետ մնացինք ընկերներ եւ այսպէս մէկ տարի յետոյ ինչ ինչ պայմաններից ելնելով հոգեկան եւ թէ իմ հայեցի դաստիարակութեան համար, ամենաճիշդ ճանապարհը ընտրեցի իմ աշխատանքի բնոյթը փոխելու մէջ եւ այդ ձեւով մոռնալ նրան: Եւ այսպէս ես «ազատուեցի» այդ հիմնարկութիւնից:*

*Սակայն Ռիմայի անունը յիշողութեանս մէջ է եւ ամէն անգամ այդ անունը սրտիս մէջ մնաց առաջին խորհրդանշող անուն:*

# ՊՈՒՇԻՆ ԱՆՏԵՍԱԾ «ԴԱՍԵՐԸ»

*Շարունակուած էջ 7-էն*

*տունէն հազարաւոր մղոն հեռաւորութեամբ - մանաւանդ որ բոլորովին տարբեր մշակութային միջավայրէ մը ներս իսլամական քաղաքակրթութեամբ ապրող երկիրներ չեն կրնար մէկ օրէն միւսը փոխուիլ՝ արեւմտեան ենթակայ տէրութեան մը հանգամանքին մէջ: Պուշ միամտօրէն կը յուսայ որ Իրաքէն ներս, ժամանակի ընթացքին կարելի պիտի ըլլայ Արեւմուտքի նմանող դեմոկրատական երկիր մը ստեղծել:*

*Ուրեմն ի՞նչ է կացութիւնը: Պուշի ոչ միայն ներքին քաղաքական ընդդիմութիւնը երթալով պիտի զօրանայ, եւ այս մէկը կրնայ վնասել իր հեղինակութեան եւ կառավարելու կարողութեան, այլ յատկապէս Իրաքէն, եւ նաեւ Աֆղանիստանէն ներս, ինքզինքը եւ իր բանակները պիտի գտնէ դէմ առ դէմ՝ ծայրայեղականներու եւ ճիհատիսթներու, որոնք պիտի շարունակեն կռիւը, պաշտպանելու համար իրենց հայրնիքը եւ կրօնքը, գրաւման բանակներու դէմ:*

*Եթէ Իրաքը «հուչակաւոր դատ»ի վերածուեցաւ, պատճառը եւ պատասխանատուութիւնը պէտք է փնտռել Պուշին հետեւած սխալ քաղաքականութեան մէջ: Առնուելիք դասերը եթէ սկիզբէն քննուէին, եւ պէտք եղած եզրակացութիւնները հանուէին, Իրաքեան ողբերգութիւնը կրնար խնայուիլ թէ՛ նոյնինքն Ամերիկայի, ե՛ւ նաեւ Իրաքին: Իսկական իմաստութիւնը եւ կամ քաղաքական իրապաշտութիւնը կը պահանջեն աղէտէն առաջ հաշիւները ընել եւ հաւանական դասերը քաղել: Հիմա արդէն անկարելի է նախատեսել թէ պատմութիւնը ի՞նչ դատավճիռ պիտի արձանագրէ եղած սխալներուն համար:*


**ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ**

**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ**
**(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)**

**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ**

**1060 N. ALLEN AVE. PASADENA**
**ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՀԵՌԱՁԱՅՆԵԼ**
**(626) 797-7680 (626) 398-0506**

MISSION LIQUOR

# Mission Liquor & Wines

WE WILL BEAT ANY ADVERTISED PRICE!

| | | | |
|---|---|---|---|
| Absolut $ 13.99 750ml $ 25.99 1.75L | Hennessy *VS* $ 20.49 750ML | Grey Goose Vodka $ 20.49 750ml $ 49.99 1.75L | Johnnie Walker Black Label $ 20.49 750ml $ 49.99 1.75L |
| Pravda Vodka $ 18.99 750ml | Hennessy *VSOP* $ 28.99 750ml | Cristall Vodka $ 11.99 750ml | Belvedere Vodka $ 20.99 750ml |
| Imperia Russian Vodka $ 17.99 750ml | Moskovskaya Russian Vodka $ 5.99 750ml | Level Vodka $ 19.99 750ml | Stolichnaya Vodka $ 13.99 750ml $ 19.99 1.75L |
| Stolichnaya Elit Vodka $ 39.99 750ml | Ketel One Vodka $ 17.99 750ml | Skyy Vodka $ 10.99 750ml $ 19.99 1.75L | Johnnie Walker Red Label $ 14.49 750ml $ 28.99 1.75L |
| Dewar's 12 Yr Scotch $ 16.99 750ml | Patron Anejo / Reposado $ 29.99 750ml Silver $35.99 750ml | Courvoisier *VS Cognac* $ 17.99 750ml | Chivas Regal 12 Yr Scotch $ 17.99 750ml $ 44.99 1.75L |
| Don Julio Añejo Tequila $ 34.99 750ml Silver 750ml $28.99 Reposado 750ml $31.99 | Don Julio 1942 Tequila $ 94.99 750ml | Sauza Tres Generaciones $ 22.99 750ml Anejo / Blanco / Reposado | 1800 Tequila $ 16.99 750ml $ 18.99 1.0L Blanco / Reposado |
| Ora Blue French Vodka $ 10.99 750ml | 1800 Tequila Anejo $ 31.99 750ml | Johnnie Walker Blue Label $ 149.99 750ml | Louis XI XO Brandy $ 14.99 750ml |

1801 E. Washington Blvd., Pasadena, CA 91104

***Liquor (626) 794-7026 • Tobacco (626) 797-0500***

Corner of Allen & Washington • Open Monday—Saturday 9 am - 8 pm

www.missionliquor.com

*Minimum 12 Bottle Mix & Match • This ad expires on 10/30/06 • We reserve the right to limit quantities • Sales tax excluded • Prices subject to change without notice • No checks or credit cards